

ԺԱՄԱԳԻՐՔ
ՄԵԾԻ ՊԱՅՈՑ

ԱՐԵՒԱԳԱԼԻ
ԽԱՂԱՂԱԿԱՆԻ
ԵՒ
ՀԱՆԳՍՏԵԱՆ
ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆՑ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի Հայրապետութեան
Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
Սրբազնագոյն Կաթողիկոսին
Ամենայն Հայոց

Հրամանաւ
Տ. ԱՇՈՏ ՍՐԲ. ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Առաջնորդին Հայոց Եգիպտոսի

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս.ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

«ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԻՔ»
ՄԱՏԵՆԱՇԱՐ
Գ

ԱՐԵՎԱԳԱԼԻ ԱՄՐԵԳՈՒԹԻՒՆ

Կարգաւորութիւն Դասարակաց աղօթից Արեւագալի Ժամուն,
Որ կատարի ի դէմս Դոգւոյն Սրբոյ

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Զրիստոս. ամէն

Դա՛յր մեր, որ յերկիս ես, սո՛ւրբ եղիցի անուն Զո: Եկեցէ՛ արքայութիւն Զո: Եղիցին կամք Զո որպէս յերկիսս՝ եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Չի Զո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

ՔԱՅԱՆԱՅ - Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարեւ է անուն նորա:

ՍԱՐԿԱԲԱԳ - Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, եւ ամենայն ազիւք երանիցեն նմա: Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի, որ առնէ սքանչելիս միայն. եւ օրհնեալ է անունստուրբ փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ամենայն երկիր. եղիցի եղիցի:

ՔՅԼՅ. Փառք Դօր եւ Որդւոյ եւ Դոգւոյն Սրբոյ:

ՍՐԿ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ կեցո՛յ եւ ողորմեա՛:

ՔՅԼՅ. Օրհնութիւն եւ փառք Դօր եւ Որդւոյ եւ Դոգւոյն Սրբոյ . այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԵՐԳ ԱՐԵՎԱԳԱԼԻ ԴԿ

Յարեւելից մինչ ի մուտս. ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ ամենա՛յն ազգ եւ ազիւք, յօրհնութիւն նոր օրհնեցէ՛ք զԱրարիչն արարածոց, որ ծագեաց զլոյս արեգականն այսօր յաշխարհս:

Եկեղեցի՛ք արդարոց, փառաբանի՛չք Ամենաստուրբ Երրորդութեանն. յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութեան Զրիստոս զովեցէք ընդ Դօր եւ Դոգւոյն, որ ծագեաց զլոյս գիտութեանն իւրոյ ի մեզ:

ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄՐԵԳՈՒԹԻՒՆ

Կարգ Հասարակաց աղօթքի Արեւագալի Ժամուն,
Որ կատարի ի դէմս Հոգւոյն Սրբոյ

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Զրիստոս. ամէն

Հայր մեր, որ երկինքն ես, սուրբ թող ըլլայ Զու Անունդ: Զու թագաւորութիւնդ թող գայ, Զու կամքդ թող ըլլայ, ինչպէս երկնքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզի այսօր: Եւ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս եւ մենք կը ներենք մեր պարտապաններուն: Եւ մի՛ թողուր որ փորձութեան մէջ իյնանք, այլ փրկե՛ մեզի չարէն: Զանգի Զուկդ եւ Թագաւորութիւնը եւ Չօրութիւնը եւ Փառքը յաւիտեանս. ամէն:

ՔԱՅԱՆԱՅ - Օրհնեալ թող ըլլայ Տիրոջը Անունը յաւիտեան, քանզի Անոր Անունը արեւէն առաջ է:

ՍԱՐԿԱՎԱԳ - Անոր միջոցաւ թող օրհնուին երկրի բոլոր ազգերը, եւ բոլոր ցեղերը Անոր թող երանի տան: Օրհնեալ թող ըլլայ Իսրայէլի Տէր Աստուածը, որ միայն Ինքը հրաշքներ կը գործէ, նաեւ յաւիտեան օրհնուած է Անոր սուրբ փառքի Անունը: Անոր փառքով թող լեցուի երկիրը. թող ըլլայ, թող ըլլայ:

ՔՅՆՅ. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

ՍՐԿ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Եւ առաւել խաղաղութեան համար Տիրոջը աղաչենք. ընդունէ, ապրեցուր եւ ողորմէ:

ՔՅՆՅ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՐԵՎԱԳԱԼԻ ԵՐԳ ԴԿ

Արեւելքէն մինչեւ արեւմուտք, հիւսիսէն եւ հարաւէն, բոլոր ազգեր եւ ցեղեր, նոր օրհնութիւնով օրհնեցէք արարածներու Արարիչին, որ այսօր արեգակի լոյս ծագեցուց աշխարհի վրայ:

Արդարներու եկեղեցիներ, Ամենասուրբ Երրորդութեան փառաբանողներ, լուսածագ այս առաւօտուն Հօր եւ Հոգւոյն հետ Խաղաղութեան Առաւօտ Զրիստոսը գովեցե՛ք, որ Իր իմաստութեան լոյսը ծագեցուց մեր վրայ:

Յարեւելից յարեւմուտս մանկո՛ւնք Սիոնի, օրհնեցէ՛ք միշտ
անդադար զծագողն լուսոյ:
Եկեղեցի՛ք արդարոց եւ փառաբանի՛չք. բարեբանեցէ՛ք որ ետ
զիմաստս լուսոյ:

ՔԱՐՈՉ

ՄՐԿ. Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու ընդ ամենայն տեղիս
քրիստոնէութեան, ուր եւ կարդան զանուն Տեառն սրբութեամբ,
Տէր աղօթիւք նոցա եւ բարեխօսութեամբն մեզ ողորմեսցի:
Ուխտիւք զվստուած աղաչեսցուք, զի նա փրկեսցէ զմեզ ի մեղաց
եւ ի ցանկութենէ աշխարհի: Ընկալցի զուխտս եւ զխնդրուածս
սրտից մերոց. եւ արժանի արասցէ զմեզ հաւատոց եւ
պատուիրանաց իւրոց ընդ ամենայն սուրբս իւր: Ամենակա՛լ Տէր
վստուած մեր, կեցո՛ր եւ ողորմեա՛:

ՔՅԼՅ. Կեցո՛ր Տէր:

ՄՐԿ. Չառաւօտս լուսոյ եւ զառաջիկայ օրս խաղաղութեամբ
անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք:

ՔՅԼՅ. Շնորհեա՛ Տէր:

ՄՐԿ. Չհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց, ի Տեառնէ
խնդրեսցուք:

ՔՅԼՅ. Շնորհեա՛ Տէր:

ՄՐԿ. Չքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց, ի Տեառնէ
խնդրեսցուք:

ՔՅԼՅ. Շնորհեա՛ Տէր:

ՄՐԿ. Չսրբոյ խաչին մեծ եւ կարող զօրութիւն անձանց մերոց, ի Տեառնէ
խնդրեսցուք:

ՔՅԼՅ. Շնորհեա՛ Տէր:

ՄՐԿ. Եւ եւս՝ միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր
աղաչեսցուք:

ՔՅԼՅ. Տէր Ողորմեա՛:

Նստիլ

ՅՈՐԴՈՐԱԿ

Արեւելքէն արեւմուտք՝ Սիոնի մանուկներ, միշտ՝ անդադար
օրհնեցէ՛ք, լոյսը ծագեցնողը:
Արդարներու եկեղեցիներ եւ փառաբանողներ, բարեբանեցէ՛ք
Անոր, որ իմաստութեան լոյսը շնորհեց:

ԲԱՐՈՉ

ՄԲԿ. Արեւելքէն մինչեւ արեւմուտք, Զրիստոնէական բոլոր երկրներուն
մէջ, ուր որ սրբութիւնով Տիրոջ Անունը կը կանչեն. Տէրը անոնց
աղօթքով եւ բարեխօսութիւնով թող մեզի ողորմի: Ուխտեր
ընելով աղաչենք Աստծոյ, որ փրկէ զմեզ մեղքերէ եւ աշխարհիկ
ցանկութիւններէ: (Տէրը) թող ընդունէ մեր ուխտերն ու սրտերուն
խնդրուածքները եւ իր բոլոր Սուրբերուն հետ՝ Իր հաւատքին ու
պատուիրաններուն արժաննցնէ՛ մեզ: Ամենակալ Տէ՛ր Աստուած
մեր, ապրեցո՛ւր եւ ողորմէ՛:

ԲՅՆՅ. Ապրեցո՛ւր Տէր:

ՄԲԿ. Առաւօտը եւ յառաջիկայ օրը խաղաղութիւնով անցնելու (համար)
հաւատքով խնդրե՛նք Տիրոջմէն:

ԲՅՆՅ. Շնորհեա՛ Տէ՛ր:

ՄԲԿ. Մեր անձերուն պահպանութեան համար խաղաղութեան
հրեշտա՛կը խնդրենք Տիրոջմէն:

ԲՅՆՅ. Շնորհեա՛ Տէ՛ր:

ՄԲԿ. Մեր յանցանքներուն համար քաւութիւն եւ թողութիւն խնդրե՛նք
Տիրոջմէն:

ԲՅՆՅ. Շնորհեա՛ Տէ՛ր:

ՄԲԿ. Մեր անձերուն համար Սուրբ Խաչին մեծ եւ կարող զօրութիւնն ու
օգնութիւնը խնդրե՛նք Տիրոջմէն:

ԲՅՆՅ. Շնորհեա՛ Տէ՛ր:

ՄԲԿ. Աւելի միաբանուած, մեր ճշմարիտ հաւատքին համար աղաչե՛նք
Տիրոջը:

ԲՅՆՅ. Տէ՛ր Ողորմեա՛:

ՄՐԿ. Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

ՔՅԼՅ. Քեզ՝ Տեառնդ յանձն եղիցուք :

ՄՐԿ. Ողորմեաց մեզ, Տէ՛ր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասացուք ամենեքեան միաբանութեամբ:

ՔՅԼՅ. Տեր ողորմեա՛, Տեր ողորմեա՛, Տեր ողորմեա՛:

Ուտքի ելլել

ԱՂՕԹՔ

ՔՅԼՅ. Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու օրինեալ ես, Տէ՛ր, վասնզի թագաւոր քաղցր ես, եւ անուն քո ահեղ է ընդ ամենայն տիեզերս: Քաղցրասցին սաղմոսերգութիւնք մեր առաջի քոյ, ելցեն իրաւունք յարդարութենէ քումմէ ի տկարութիւնս մեր, եւ փառաւորեսցի ամենասուրբ անուն քո: Եւ մէք արժանի եղիցուք կալ ի պատուիրանի քում եւ քեզ երգել զօրհնութիւն եւ զփառս Զօր եւ Որդւոյ եւ Զոգւոյդ Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւի:

Խաղաղութիւն ամենեցուն
Աստուծոյ երկիրպագեսցուք

Աստուած մշտնջենաւոր, Աստուած յաւիտենական, որ ի ստորին աշխարհս լոյս ծագեցար եւ լուսաւորեցեր զմեզ ի խաւարային մեղաց մերոց: Որ վասն մեր ի չափաւորութիւն եկիր, անչա՛փոյ Աստուած, եւ հեղեալ ծաւալեցեր զշնորհս Զոգւոյդ Սրբոյ յարարածս քո: Այժմ եւ յաւիտեանս ժամանակաց բարեբանեալ ես, ամենամե՛ծոյ Աստուած, ընդ Զօր եւ Ամենասուրբ Զոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամեն:

Նստիլ

ՍԱՂՄՈՍ ԴԹ (99)

Աղաղակեցէ՛ք առ Տեր, ամենա՛յն երկիր,
ծառայեցէ՛ք Տեառն ուրախութեամբ:
Մտէ՛ք առաջի նորա ցնծութեամբ, ծաներուք,
զի նա է Տեր Աստուած մեր:

ԵՐԳ ԴԿ

Ճգնաւորք Աստուծոյ եւ ժառանգորոք երկնից արքայութեանն, որք փոխանակեալք զանցաւորս՝ առիք զանանցն բարութիւնսն, բարեխօսեցէք առ Տեր վասն մանկանց եկեղեցւոյ:

ՄՐԿ. Մեր անձերը եւ գիրար՝ Ամենակալ Տիրոջը յանձնենք:

ՔՅԼՅ. Քեզի՝ Տիրոջդ կը յանձնենք:

ՄՐԿ Տէր Աստուած մեր, Քու մեծ ողորմութիւնովդ ողորմէ՛ մեզի. ամենքս միաբերան ըսենք:

ՔՅԼՅ. Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:

Ուտքի ելլել

ԱՂԹՔ

ՔՅԼՅ. Արեւելքէն մինչեւ արեւմուտք օրհնուած ես, Տէր, քակզի Բարի Թագաւոր ես, եւ Քու անունդ երկիւղալի է ամբողջ աշխարհին մէջ: Թող հաճելի ըլլան մեր սաղմոսերգութիւնները Քու առջեւդ, մեր տկարութեան ատեն իրաւունքներ թող բխին Քու արդարութենէդ, եւ թող փառաւորուի Քու Ամենասուրբ Անունդ, որպէսզի մենք ալ արժանի ըլլանք Քու պատուիրաններուդ մէջ հաստատ մնալու եւ օրհնութիւն եւ փառք երգելու Քեզ՝ Յօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն բոլորին
Աստուծոյ երկրպագենք

Աստուած մշտնջենաւոր, Աստուած յաւիտենական, որ վարի աշխարհին (երկրի) վրայ իբրեւ լոյս ծագեցար եւ լուսաւորեցիր մեզ մեր խաւարային մեղքերէն: Ով անչափդ Աստուած, որ մեզի համար չափի մէջ մտար եւ Սուրբ Հոգիիդ շնորհները հեղելով՝ տարածեցիր արարածներուդ վրայ: Այժմ եւ յաւիտենապէս բարեբանուած ես, ով Ամենամեծդ Աստուած՝ Հօր եւ Ամենասուրբ Հոգիիդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Նստիլ

ՍԱՂՄՈՍ ԴԹ (99)

Բոլոր երկիրներ՝ Տիրոջն աղաղակեցէ՛ք,
Ուրախութեամբ ծառայեցէ՛ք Տիրոջը:
Ցնծութեամբ Անոր առջեւը եկէ՛ք,
Ճանչցէ՛ք, որ Ան է մեր Տէր Աստուածը:

ԵՐԳ ԴԿ

Աստուծոյ ճգնաւորներ եւ երկնքի արքայութեան ժառանգորդներ, դո՛ւք, որ անցաւորները փոխանակելով՝ անժամանակ բարիքները առիք: Եկեղեցւոյ մանուկներուն համար Տիրոջը բարեխօսեցէ՛ք:

Նահատա՛կք պանծալիք եւ սիրեցեա՛լք ի յերկնաւոր Զօրէն, որք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին, բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ:

Մարտիրո՛սք ցանկալիք եւ օթեա՛նք Զոգւոյն ճմրատութեանն, որք յաղթեցիք հոգւով կարեաց եւ ցանկութեան. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ:

Գովելի՛ք աշխարհի եւ բաղձալի՛ք վերնոցն պետութեանց, որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան, բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ:

Կամաւոր պատարա՛գք, մանկո՛ւնք տիօք եւ կատարեա՛լք իմաստութեամբ, որք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցուցիչ, բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճգնաւորք ճշմարիտք վկայք Քրիստոսի,
Բարեխօսեցէ՛ք առ Տէր վասն անձանց մերոց:

Նահատակք կենդանիք սիրողք Քրիստոսի,
Որք չարչարեցայք մարմնով վասն անուանն Տեառն:

Մարիտրոսք ցանկալիք մարդկան ըղձալիք,
Չայցեցէ՛ք ի Սուրբ Զոգւոյն տալ մեզ զբարիս:

Գովելիք վերնոց դասուց, պարծանք աշխարհի,
Խնդրեցէ՛ք զխաղաղութիւն տալ եկեղեցւոյ:

Կամաւոր սուրբ պատարագք հասակաւ մանկուք,
Չայցեցէ՛ք լինիլ եւ մեզ՝ ձեզ պսակակից:

Ոտքի ելլել

ՄԱՂԹԱՆՔ

ՔՅԼՅ. Աղաչեմք ողորմեա՛ց, ՏԷ՛ր բարերար, աղաչեմք ողորմեա՛ց. վասն աղօթից սրբոց ճգնաւորացն՝ աղաչեմք ողորմեա՛ց:

ՔԱՐՈՉ

ՄԿ. Սուրբ ճգնաւորօքն աղաչեսցուք զՏէր, որք զչարսն պարտեցին, նեղութեանցն համբերեցին, լուսեղէն եւ երկնային անթառամ պսակացն արժանի եղեն, աղօթիւք խոցա եւ բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի: Ամենակա՛լ Տէր Աստուած մեր, կեցո՛ր եւ ողորմեա՛:

Պանծալի նահատակներ եւ Երկնաւոր Զօրմէն սիրուածներ, դո՛ւք, որ ձեր արիւնով՝ Քրիստոսի հետ Խաչին մահով մկրտուեցաք, եկեղեցւոյ մանուկներուն համար Տիրոջը բարեխօսեցէ՛ք:

Ցանկալի մարտիրոսներ եւ ճշմարտութեան Զոգիին օթեւաններ, դո՛ւք, որ հոգիով յաղթանակեցիք՝ կիրքերու եւ ցանկութեան, եկեղեցւոյ մանուկներուն համար Տիրոջը բարեխօսեցէ՛ք:

Աշխարհի գովելիներ եւ վերին պետութիւններուն կողմէբաղձալիներ, դո՛ւք, որ մարդոց բոլոր որդիներէն աւելի երանութեան արժանացաք, եկեղեցւոյ մանուկներուն համար Տիրոջը բարեխօսեցէ՛ք:

Կամաւոր Սուրբ զոհեր, տարիքով մանկահասակ եւ իմաստութեամբ կատարեալներ. Դո՛ւք, որ կաթին փոխարէն՝ զմայլեցնող գինին խմեցիք, եկեղեցւոյ մանուկներուն համար Տիրոջը բարեխօսեցէ՛ք:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճշմարիտ ճգնաւորներ, Քրիստոսի վկաներ,
Տիրոջը բարեխօսեցէ՛ք մեր անձերուն համար:

Ապրող նահատակներ, Քրիստոսին սիրողներ,
Որ մարմնով չարչարուեցաք՝ Տիրոջը Անունին համար:

Ցանկալի մարտիրոսներ, մարդոց կողմէն բաղձալիներ, բարիքներ
պարգեւել խնդրեցէ՛ք Սուրբ Զոգիէն:

Վերին դասերուն կողմէն գովուածներ, աշխարհի պարծանքներ,
Եկեղեցւոյ խաղաղութիւն շնորհել խնդրեցէ՛ք:

Կամաւոր Սուրբ զոհեր, դեռահասակ մանուկներ,
Սեզի համար ալ՝ ձեզի պսակակից ըլլալ խնդրեցէ՛ք:

Ուտքի ելլել

ՄԱՂԹԱՆՔ

ՔՅԼՅ. Կ'աղաչենք, ողորմէ՛ Բարերար Տէ՛ր, կ'աղաչենք, ողորմէ՛. սուրբ ճգնաւորներուն աղօթքներուն սիրոյն՝ կ'աղաչենք, ողորմէ՛:

ՔԱՐՈՉ

ՍՐԿ. Սուրբ ճգնաւորներուն հետ միասին Տիրոջը աղաչենք, որոնք չարերը յաղթեցին, նեղութիւններուն համբերեցին, լուսեղէն եւ անթառամ պսակներուն արժանի եղան: Տէրը՝ անոնց աղօթքով եւ բարեխօսութեամբ թող ողորմէ մեզի: Ամենակալ Տէր Աստուած մեր, ողորմէ՛ եւ կեանք շնորհէ՛:

ԱՂՈԹՔ

ՔՅԼՅ. Սուրբ ես, Տէ՛ր, եւ ի սուրբս հանգուցեալ. եւ մէք սուրբ վկայիւքս աղաչեմք զքեզ. բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց մի՛ մերժեր զմեզ յողորմութենէ քումմէ, այլ կեցո՛ր զմեզ աղօթիւք սոցին, զի դու ես բազումողորմ Աստուած, եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈՉ

ՍՐԿ. Յիշեա՛, Տէ՛ր, զպաշտօնեայս քո. զծնողսն մեր, զվարդապետս, զեղբայրս, զընկերս, զկերակրիչս, զուխտաւորս, զճանապարհորդս, զհանգուցիչս, զվաստակաւորս, զխոստովանողս, զգերիս, զհիւանդս, զնեղեալս, զիշխանս, զչարարարս, զբարերարս, զթշնամիս, զատելիս, եւ որք պատուիրեցին մեզ հաւատով:

ԱՂՈԹՔ

ՔՅԼՅ. Յիշեա Տէ՛ր, եւ ողորմեա՛: Բարերար եւ բազումողորմ Աստուած, քո անմոռաց գիտութեամբդ եւ անբաւ մարդասիրութեամբդ յիշեա՛ զամենայն հաւատացեալս ի քեզ, եւ ողորմեա՛ ամենեցուն: Օգնեա՛ եւ փրկեա՛ յիւրաքանչիւր վտանգից եւ փորձութեանց: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զՅայր եւ զՈրդի եւ զՍուրբ Յոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ԿԲ (62)

ՍՐԿ. Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ. ծարաւեաց առ քեզ հոգի իմ, քանիպատիկ եւս եւ մարմին իմ:

ԵՐԳ

Լոյս, Արարիչ լուսոյ, առաջին լոյս. բնակեալդ ի լոյս յանմատոյց, Յայր երկնաւոր, ի դասուց լուսեղիկացն օրհնեալ, ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Լոյս, ի լուսոյ ծագումն, արեգա՛կն արդար, անճառ ծնունդ Յօր Որդի՛, յառաջ քան զարեւ անուն քո գովեալ ընդ Յօր. ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

ԱՂՈԹՔ

ՔՅԼՅ. Սուրբ ես, Տէր, որ Սուրբերուն մէջ կը հանգչիս, եւ մենք ալ այս սուրբ վկաներով կաղաչենք Քեզի: Սուրբ Աստուածածնին բարեխօ-սութեամբ եւ բոլոր սուրբերու աղաչանքներով, մի՛ մերժեր մեզի Քու ողորմութենէդ, այլ անոնց աղօթքներով ապրեցուր մեզ, որովհետեւ Դո՛ւն ես բազումողորմ Աստուած, ուստի՝ Քեզի կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈՉ

ՍՐԿ. Տէր, յիշէ Քու պաշտօնեաներդ, մեր ծնողները, վարդապետները, եղբայրները, ընկերները, կերակրողները, ուխտաւորները, խոստովանողները, ապաշխարողները, գերիները, հիւանդները, տառապողները, իշխանները, չարագործները, բարերարները, թշնամիները, ատելիները եւ անոնք, որոնք հաւատքով դաստիարակեցին մեզ:

ԱՂՈԹՔ

ՔՅԼՅ. Տէր յիշէ՛ եւ ողորմէ՛: Բարերար եւ բազումողորմ Աստուած, Քու անմոռանալի գիտութիւնովդ եւ անհուն մարդասիրութիւնովդ յիշէ բոլոր Քեզի հաւատացողները եւ ողորմէ բոլորին: Օգնէ եւ փրկէ ամէն տեսակ վտանգներէ եւ փորձութիւններէ: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու Յայրը, Որդին եւ Սուրբ Յոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ԿԲ (62)

ՍՐԿ. Աստուած, Աստուած իմ, առաւօտ կանուխ Քեզի կը փնտռեմ, հոգիս ծարաւած է Քեզի, իսկ մարմինս՝ շատ աւելի:

ԵՐԳ

Լոյս, լոյսի Արարիչ, առաջին Լոյս, Անմատչելի լոյսին մէջ բնակող Երկնաւոր Յա՛յր, լուսեղէններու դասերէն օրհնուած: Առաւօտեան լոյսին ծագելուն պէս, Քու իմանալի լոյսդ ծագեցուր մեր հոգիներուն մէջ:

Լոյս, Լոյսէն ծագած Արդար Արեգակ, Յօր անճառելի ծնունդ Որդի, Քու Անունդ՝ Յօր հետ, արեւէն առաջ գովաբանուած է: Առաւօտեան լոյսին ծագելուն պէս, Քու իմանալի լոյսդ ծագեցուր մեր հոգիներուն մէջ:

Լոյս, ի ԶօրԷ բղխումն, աղբի'ր բարութան, Զոգիդ Սուրբ Աստուծոյ մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս զքեզ բարեբանեն. ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա' ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Լոյս, Երրեակ եւ Մի անբաժանելի Սո'ւրբ Երրորդութիւն, զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք. ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա' ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Նստիլ

ՅՈՐԴՈՐԱԿ

Անեղանելի'դ Աստուած, Զա'յր ամենակալ.
ընկա'լ զաղաչանս մեր քոց պաշտօնէից:

Ի ԶօրԷ ծագո'ւմն անճառ, արեգա'կն արդար.
ծագեա' ի յանձինս մեր զլոյսդ ողորմութան:

Ի ԶօրԷ բղխեալ Զոգի, աղբի'ր բարութան.
լուսով քով լցո' զմեզ յայսմ առաւօտուս:

Երեք անձինք եւ մի բնութիւն, մի Աստուածութի'ն.
զքեզ խոստովանիմք յաւետ Սուրբ Երրորդութիւն:

Ոտքի ելլել

ՄԱՂԹԱՆՔ

ԸՅԼՅ. Լուսովդ քո, Զրիստո'ս, ամենեքեան լուսաւորեցաք, եւ ի սուրբ խաչ քո, Փրկի'չ, հաւատացեալքս ապաւինեցաք: Լո'ւր մեզ, Աստուած Փրկի'չ մեր. տո'ւր մեզ զխաղաղութիւն քո. եւ արա' առ մեզ զողորմութիւն քո, մարդասէ'ր Տէր:

ՔԱՐՈՉ

ՄՐԿ. Եւ եւս խաղաղութան զՏէր աղաչեսցուք: Փառաւորեսցուք զամենակալն Աստուած, որ ծագեաց զլոյս առաւօտու յարարածս իւր, ծագեսցէ եւ այժմ զառատ ողորմութիւն իւր ի վերայ փառաբանչաց անուան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո' եւ ողորմեա':

ԱՂՈԹՔ

ԸՅԼՅ. Չառաւօտու աղօթս եւ զբանաւոր պաշտօնս' ընկալ ամենակա'լ ամենամե'ծդ Աստուած, ի քո անապական եւ յերկնային խորանսդ: Ծագեա' առ մեզ զարդարութան եւ զիմաստութեան զլոյս քո. արա' զմեզ որդիս լուսոյ եւ որդիս տուրքեան. որպէս զի ի գալ աւուրս երկիւղածութեամբ վարեսցուք զկեանս մեր, եւ

Լոյս, Յօրմէն բխած բարութեան Աղբիւր, Աստուծոյ Սուրբ Յոգիդ. Եկեղեցւոյ զաւակներ հրեշտակներուն հետ Քեզի կը բարեբանեն: Առաւօտեան լոյսին ծագելուն պէս, Քու իմանալի լոյսդ ծագեցուր մեր հոգիներուն մէջ:

Լոյս, Երբեակ եւ մի, Անբաժանելի Սուրբ Երրորդութիւն, Երկրածիններս՝ երկնայիններուն հետ, միշտ Քեզի կը փառաւորենք: Առաւօտեան լոյսին ծագելուն պէս, Քու իմանալի լոյսդ ծագեցուր մեր հոգիներուն մէջ:

Նստիլ

ՅՈՐԴՈՐԱԿ

Անեղանելիդ Աստուած, Յա՛յր Ամենակալ:
Ընդունէ Քու պաշտօնեաներուդ աղաչանքները:

Յօրմէն անճառապէս ծագած՝ Արդար Արեգակ,
Ողորմութեանդ լոյսը ծագեցուր մեր հոգիներուն մէջ:

Յօրմէն բխած Յոգի՝ Աղբիւր բարութեան,
Այս առաւօտ՝ լեցուր մեզ Քու լոյսովդ:

Երեք անձ եւ մէկ բնութիւն՝ մէկ Աստուածութիւն,
Քեզի միշտ կը խոստովանինք՝ Սուրբ Երրորդութիւն:

Ոտքի ելլել

ՄԱՂԹԱՆՔ

ՔՅԼՅ. Քու լոյսովդ Քրիստոս, ամենքս ալ լուսաւորուեցանք, եւ ո՛վ Փրկիչ, հաւատացեալներս՝ Քու Սուրբ Խաչիդ ապաւինեցանք: Ո՛վ Մեր Փրկիչ Աստուած, լսէ՛ մեզի ու Քու խաղաղութիւնդ տուր մեզի եւ Քու ողորմութիւնդ շնորհէ մեզի, ո՛վ Սարդասեր Տէր:

ՔԱՐՈՉ

ՄՐԿ. Եւ առաւել խաղաղութեան համար Տիրոջը աղաչենք: Փառաւորենք Ամենակալ Աստուծոյ, որ առաւօտեան լոյսը ծագեցուց Իր արարածներուն վրայ: Յիմա ալ՝ Իր առատ ողորմութիւնը թող ծագեցնէ Իր անունը փառաբանողներուն վրայ: Ամենակալ Տէր Աստուած մեր, ապրեցո՛ւր եւ ողորմէ՛:

ԱՂՈԹՔ

ՔՅԼՅ. Ամենակալ եւ Ամենամեծդ Աստուած, Քու անապական եւ երկնային յարկերուդ մէջ ընդունէ մեր առաւօտեան այս աղօթքն ու բանաւոր պաշտամունքը: Արդարութեան եւ իմաստութեան Քու լոյսդ ծագեցուր մեր վրայ եւ զմեզ՝ լոյսի եւ ցերեկուան որդիներ ըրէ, որպէսզի յառաջիկայ այս օրուան մէջ երկիւղածութեամբ

առանց գայթակղութեան կատարեսցուք: Չի դու ես օգնական եւ փրկիչ մեր. եւ քեզ վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Նստիլ

ՍԱՂՄՈՍ ԻԲ (22)

Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակասեսցի:

Ի վայրի դալարուոջ անդ բնակեցոյց զիս եւ առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

ԵՐԳ ԴԿ

Ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք Զրիստոս.
Առաջնորդեա՛ հոգւոց մերոց յերկրէ ելանել յերկինս:

Դուռն կենաց մտից Յիսուս.
Մո'յծ եւ զմեզ առ Հայր քո եւ Հոգի՛
Երգել միշտ զփառս:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճանապարհ բարի Զրիստոս եւ ճշմարտութիւն.
առաջնորդ հոգւոց մերոց յերկրէ ի յերկինս:
Դուռն կենաց մտից Յիսուս. Աստուած ճշմարիտ.
մո'յծ եւ զմեզ առ Հայրդ քո. Հոգւովդ Սրբով:

Ոտքի ելլել

ՍԱՂԹԱՆԶ

ԲՅՆՅ. Տէ՛ր, ուղղեա՛ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան. Տէ՛ր, ուղղեա՛ եւ առաջնորդեա՛ հոգւոց մերոց եւ ամենայն հաւատացելոց, զնալ յարդարութեան ճանապարհս եւ ի կեանսս յաւիտենից:

ԲԱՐՈՉ

ՍՐԿ. Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զի յաջողեալ ուղղեսցէ զճանապարհս ծառայից իւրոց ի բարի եւ խաղաղութիւն: Ամենակալ՛ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

ԱՂՕԹԶ

ԲՅՆՅ. Օրինեալ ես, Տէ՛ր Աստուած Փրկիչ մեր, որ յամենայն ժամ ընդ մեզ ես, եւ ոչ երբեք թողուս ի ձեռանէ քումմէ զայնոսիկ՝ որք հաւատով եւ ճշմարտութեամբ կարդան առ քեզ: Աղաչեմք եւ խնդրեմք ի քէն,

ապրինք մեր կեանքը եւ առանց գայթակղութեան աւարտին հասցնենք: Քանզի Դուն ես մեր Փրկիչն ու Օգնականը, եւ Քեզի կը վայելեն փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամեն:

Նստիլ

ՍԱՂՄՈՍ ԻԲ (22)

Տերն իմ Յովիւն է, եւ ինծի բան մը պիտի չպակսի:

Դաւարագեղ վայրին մէջ բիակեցուց զիս եւ հանգստաւէտ ջուրերուն քով սնուցանեց:

ԵՐԳ ԴԿ

Ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք՝ Քրիստոս,
Առաջնորդէ մեր հոգիները՝ երկրէն դէպի երկինք ելլելու:

Յաւիտենական կեանքի մուտքի Դուն՝ Յիսուս,
Մտցուր մեզ ալ Քու Յօրդ եւ Յօգույդ քով՝
Մշտնջենաւոր փառաբանութիւններ երգելու:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճանապարհ Բարի եւ ճշմարտութիւն՝ Քրիստոս,
Մեր հոգիներու Առաջնորդ՝ երկրէն դէպի երկինք:
Կեանքի մուտքի Դուն՝ Յիսուս, Աստուած ճշմարիտ
Մտցուր մեզ ալ Քու Յօրդ քով՝ Սուրբ Յոգւովդ:

Ոտքի ելլել

ՍԱՂԹԱՆԶ

ԹՅՆՅ. Դէպի խաղաղութեան ճամբանները, Տէ՛ր, ուղղէ՛ եւ առաջնորդէ մեր եւ բոլոր հաւատացեալներու հոգիները՝ երթալու դէպի արդարութեան ճամբան եւ յաւիտենական կեանքը:

ՔԱՐՈՉ

ՍՐԿ. Աղաչենք Ամենակալ Աստուծոյ, որպէսզի յաջողութեամբ ուղղէ Իր ծառաներուն՝ դէպի բարի եւ խաղաղ ճամբաները: Ամենակալ Տէր Աստուած մեր, ապրեցո՛ւր եւ ողորմէ՛:

ԱՂՕԹԶ

ԹՅՆՅ. Օրհնեալ ես, Տէր Աստուած Փրկիչ մեր, որ միշտ մեզի հետ ես, եւ բնաւ երբեք ձեռքէդ չես թողուր զանոնք, որոնք հաւատքով եւ ճշմարտութիւնով Քեզի կը կանչեն: Կ'աղաչենք եւ կը խնդրենք

Տէ՛ր, ճանապարհորդակի՛ց լեր ծառայից քոց՝ քոյին վերակացութեամբ՝ պահելով ի խաղաղութեան. եւ առաջնորդեա՛ մեզ միւսանգամ խաղաղութեամբ եւ խնդութեամբ հասանիլ յիւրաքանչիւր ի բնակութիւնս ի Զրիստոս Յիսուս ի Տէր մեր: Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Զրիստոս. ամէն:

Յա՛յր մեր, որ յերկիս ես, սո՛ւրբ եղիցի անուն Զո: Եկեսցէ՛ արքայութիւն Զո: Եղիցին կամք Զո որպէս յերկիսս՝ եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Չի Զո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Քեզմէ, Տէր, խաղաղութեան մէջ պահելով՝ Քու վերատեսչութեամբդ ուղեկից եղիր ծառաներուդ եւ առաջնորդէ մեզի՝ իւրաքանչիւրիս, խաղաղութեամբ եւ ուրախութեամբ վերստին հասնիլ մեր բնակարանները՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Քով, Որուն կը վայելէ փառք, պատիւ եւ իշխանութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն

Յայր մեր, որ երկինքն ես, սուրբ թող ըլլայ Քու Անունդ: Քու թագաւորութիւնդ թող գայ, Քու կամքդ թող ըլլայ, ինչպէս երկնքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզի այսօր: Եւ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս եւ մենք կը ներենք մեր պարտապաններուն: Եւ մի՛ թողուր որ փորձութեան մէջ իյնանք, այլ փրկէ՛ մեզի չարէն: Քանզի Քուկդ են Թագաւորութիւնը եւ Չօրութիւնը եւ Փառքը յաւիտեանս. ամէն:

ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Կարգաւորութիւն Դասարակաց աղօթից Խաղաղական Ժամուն,
Որ կատարի ի մէջ գիշերի ի դէմս Դոգոյն Աստուծոյ,
Այլեւ ի դէմս Բանին Աստուծոյ, որ եղաւ ի գերեզմանի, եւ էջ ի
դժոխս, եւ Խաղաղութիւն արար հոգւոցն

Ուտքի ելլել

Օրինեալ Տէր մեր Յիսուս Զրիստոս. ամէն:

Դա՛յր մեր, որ յերկինս ես, սո՛ւրբ եղիցի անուն Զո: Եկեցցէ՛
արքայութիւն Զո: Եղիցին կամք Զո որպէս յերկինս՝ եւ յերկրի:
Չհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ
զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ
մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Չի Զո
է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

ԶՅԼՅ. Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի եւ ի գիշերի
առաջի քո:

ՄՐԿ. Մտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, խոնարհեցի ունկն քո ի
խնդրուածս իմ:

ԶՅԼՅ. Փառք Դօր եւ Որդւոյ եւ Դոգւոյն Սրբոյ.

ՄՐԿ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, Ամէն:

ԶՅԼՅ. Օրինութիւն եւ փառք Դօր եւ Որդւոյ եւ Դոգւոյն Սրբոյ. այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, Ամէն:

ՍԱՂՄՈՍ Դ

ՄՐԿ. Ի կարդալ իմում լուար ինձ, Աստուած, ըստ արդարութեան. ի
նեղութենէ ինձ անդորր արարեր, ողորմեա ինձ եւ լուր աղօթից
իմոց:

Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրեք
զնանրութիւն, եւ խնդրեք զստութիւն:

ԵՐԳ

Շնորհեա մեզ Տէր, ՚ի գիշերի գերկնային գիսաղաղութիւն քո.

Եւ պահեա զմեզ ՚ի պատրանաց թշնամւոյն՝ ամենայաղթ

ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Կարգ Հասարակաց աղօթքի Խաղաղական ժամուն,
Որ կը կատարուի գիշեր ժամուն Հոգի Աստուծոյ դիմաց,
Այլեւ Աստուծոյ Բանին, որ դրուեցաւ գերեզմանը, իջաւ դժոխք
եւ Խաղաղութիւն ըրաւ հոգիներուն

Ուտքի ելլել

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Բրիստոս. ամէն

Հայր մեր, որ երկինքն ես, սուրբ թող ըլլայ Զու Անունդ: Զու թագաւորութիւնդ թող գայ, Զու կամքդ թող ըլլայ, ինչպէս երկնքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզի այսօր: Եւ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս եւ մենք կը ներենք մեր պարտապաններուն: Եւ մի՛ թողուր որ փորձութեան մէջ իյնանք, այլ փրկե՛ մեզի չարէն: Զանգի Զուկդ եւ Թագաւորութիւնը եւ Չօրութիւնը եւ Փառքը յաւիտեանս. ամէն:

ԶՅՆՅ. Տէ՛ր, իմ փրկիչ Աստուած, գիշեր ու ցերեկ քու առջեւդ կ'աղաղակեմ:

ՍՐԿ. Աղօթքներս Զու առջեւդ թող ներկայանան, Տէ՛ր, ականջդ թող խոնարհի իմ խնդրանքներուն:

ԶՅՆՅ. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

ՍՐԿ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԶՅՆՅ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ՍԱՂՄՈՍ Դ

ՍՐԿ. Երբ ձայն տուի, իմ արդարութեան համար մտիկ ըրիր ինծի, ո՛վ Աստուած, նեղութեան մէջ ինծի անդոր տուիր. ողորմէ ինծի եւ մտիկ ըրէ իմ աղօթքը:

Մարդոց որդիներ, մինչեւ ե՞րբ պիտի խստասիրտ ըլլաք. ինչո՞ւ սնտոսի բաներ կը սիրէք եւ ստութիւնը կը փնտռէք:

ԵՐԳ

Շնորհե՛ մեզի, Տէ՛ր, Զու երկնային խաղաղութիւնդ՝ գիշեր ատեն,

Եւ սուրբ Խաչիդ ամենայաղթ զօրութեամբ պահէ զմեզ թշնամիին

զօրութեամբ սուրբ խաչի քո: Տէր Աստուած փրկութեան իմոյ՝ ի տուէ կարդացի եւ գիշերի առաջի քո:

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. խոնարհեցի ունկն քո՝ ի ինդրուածս իմ:

Եկեցէ առ մեզ Տէր պահապան ի քէն, եւ պահեցէ զմեզ յամենայն ժամ:

Առաքեա ի մեզ Տէր զզօրութիւն սրբոյ խաչին, որ պահեցէ զմեզ յամենայն ժամ:

Արժանի արա, Տէր, գերեկս զայս խաղաղութեամբ, եւ առանց մեղաց անցո զմեօք:

Արժանաւորեա, Տէր, զգիշերս զայս խաղաղութեամբ եւ առանց մեղաց պահելով զմեզ:

Ընդ մեզ Տէր Աստուած, գիտասցիք հեթանոսք եւ պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ լուարուք զայս ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ հզօրացեալքդ պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ զի թէպէտեւ դարձեալ զօրանայք՝ դարձեալ ի պարտութիւն մատնեսցիք, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ զխորհուրդն զոր խորհիք՝ խափանէ՛ Տէր, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ զքանն զոր խօսիք՝ մի մնացէ առ ձեզ, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ո՛չ երկիցուք, եւ ո՛չ խռովիցուք, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ զՏէր Աստուած մեր փառաւոր արասցուք, եւ նա եղիցի մեզ յերկիւղ, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա, եւ նա եղիցի մեզ ի սրբութիւն, զի Աստուած ընդ մեզ է:

խաբէութիւններէն: Տէ՛ր, իմ փրկիչ Աստուած, գիշեր ու ցերեկ քու առջեւդ կ'աղաղակեմ:

Աղօթքներս քու առջեւդ թող ներկայանան, Տէ՛ր, ականջդ թող խոնարհի իմ խնդրանքներուն:

Քեզմէ պահապան թող գայ մեզի, Տէ՛ր, եւ թող պահէ՛ զմեզ ամէն ժամանակ:

Տէ՛ր, քու սուրբ Խաչիդ զօրութիւնը դրկէ մեզի, որ պահպանէ զմեզ ամէն ատեն:

Տէ՛ր, արժանի ըրէ զմեզ, որ այս երեկոն մեր վրայէն խաղաղութեամբ եւ առանց փորձանքի անցնի:

Տէ՛ր, արժանացո՛ւր զմեզ, այս գիշերը խաղաղութեամբ եւ առանց մեղքի անցնելու:

Գիտցէ՛ք, ո՛վ հեթանոսներ, Տէր Աստուած մեզի հետ է, եւ պիտի յաղթուիք. որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ լսեցէ՛ք ասիկա՝ աշխարհի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը. որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ դուք, որ զօրաւոր էք, պիտի յաղթուի՛ք. որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ եթէ նորէն զօրանաք, դարձեալ պատուութեան պիտի մատնուիք. որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ խորհուրդը՝ զոր կը խորհիք, Տէրը պիտի խափանէ. որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ խօսքը՝ զոր կը խօսիք, ձեզի պիտի չմնայ. որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Որովհետեւ ձեր զարհուրանքէն մենք չենք խռովիր. որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ մեր Տէր Աստուածը կը փառաւորենք, եւ Ան պիտի ըլլայ մեզի երկիւղ. որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ մենք Ասոր կ'ապաւինինք, եւ Ան մեզի պիտի ըլլայ սրբարան. որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա, եւ նա եղիցի մեզ ի փրկութիւն, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ ահաւասիկ ես եւ մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ ժողովուրդ որ նստեր ի խաւարի՝ ետես զլոյս մեծ, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ որ բնակեալդ էք ի խաւարի եւ ի ստուերս մահու, լոյս ծագեսցի առ ձեզ, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ քանզի մանուկ ծնաւ, Որդի եւ տուաւ մեզ, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ որոյ իշխանութիւն իւր 'ի վերայ ուսոց իւրոց, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ որ կոչի անուն նորա մեծի խորհրդոյ հրեշտակ, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ սքանչելի խորհրդակից, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ Աստուած հզօր իշխան, զի Աստուած ընդ մեզ է:

Եւ իշխան խաղաղութեան Յայր հանդերձելոյ յաւիտենին. Տէր Աստուած ընդ մեզ է:

Եւ փառք Յօր եւ Որդւոյ եւ Յօգւոյն Սրբոյ.
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մ Ա Ղ Թ Ա Ն Զ

ՔՅԼՅ. Ի մերձենալ երեկոյիս՝ համբառնամք զձեռս մեր ի սրբութիւն. զոր ինչ մեղաք այսօր խորհրդով բանիւ՝ կամ գործով՝ ի յանկողինս մեր զղջանալով. խոստովան լինելով զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտիդ Աստուծոյ, յուսալով յողորմութիւն քո: Եւ մեք միաբան գոչեսցուք. յիշեա զմեզ, Տէր, յորժամ գաս արքայութեամբ քով, եւ ողորմեա մեզ:

Ք Ա Ր Ո Չ

ՍՐԿ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Գոհացարուք զՏեառնէ, որ իւրով ողորմութեամբն առաջնորդեաց մեզ ի գործս տուրնջեան, եւ շնորհեաց մեզ միաբան գալ հասանիլ ի հանգիստ գիշերիս:

Եւ մենք Անոր կ'ապաւինինք, եւ Ան մեզի պիտի ըլլայ փրկութիւն.
որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ ահաւասիկ ես եւ այն մանուկները, զոր Աստուած տուաւ ինծի.
որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ ժողովուրդը՝ որ խաւարի մէջ կը նստէր, մեծ լոյս տեսաւ.
որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ դուք՝ որ խաւարի եւ մահուան շուքին տակ կը բնակիք, թող
լայս ծագի ձեր վրայ. որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ որովհետեւ մանուկ ծնաւ, եւ Որդի տրուեցաւ մեզի. որովհետեւ
Աստուած մեզի հետ է:

Եւ որուն իշխանութիւնը իր ուսերուն վրայ է. որովհետեւ
Աստուած մեզի հետ է:

Եւ Անոր անունը կը կոչուի՝ «Մեծ խորհուրդի հրեշտակ».
որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Նաեւ սքանչելի խորհրդակից. որովհետեւ Աստուած մեզի հետ է:

Եւ նոյնպէս Աստուած՝ հզօր իշխան. որովհետեւ Աստուած մեզի
հետ է:

Եւ իշխան խաղաղութեան, Հայր հանդերձեալ յաւիտենակա-
նութեան. որովհետեւ Տէր Աստուած մեզի հետ է:

Եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ

ՔՅԼԶ. Երեկոյեան այս պահուն, բարձրացնենք մեր ձեռքերը դէպի
սրբութիւն: Ինչ մեղք որ գործեցինք այսօր՝ խորհրդով, խօսքով
կամ գործով, մեր անկողիներուն մէջ զղջալով խոստովանինք
ծածկագետ Աստուծոյ՝ յուսալով Քու ողորմութեանդ: Եւ գոչենք
միաձայն. յիշէ՛ մեզի, Տէ՛ր, երբ Քու Թագաւորութեամբդ գաս, եւ
ողորմէ՛ մեզի:

Ք Ա Ր Ո Չ

ՍՐԿ. Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Գոհանալը Տիրոջմէն,
որ իր ողորմութեամբը առաջնորդեց մեզի ցերեկուան մեր
գործերուն մէջ, եւ շնորհեց մեզի որ միասնաբար գաւք հասնինք
գիշերային այս հանգիստին:

Եւ մեր յամենայն ժամ աղաչեսցուք զմարդասերն Աստուած, լինել պահապան անձանց մերոց, եւ նա իւրով ողորմութեամբն պահեսցէ զմեզ, եւ առաջնորդեալ հասուցէ յիւր բարութեան հանգիստն, զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Զրիստոս. Տէրն ամենակալ կեցուցէ եւ ողորմեսցի:

Ա Ղ Օ Թ Զ

ՔՅԼՅ. Տէր բարերար, որ մեծաւ գթութեամբ քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն առաքինութեամբ աշխատելոցն. եւ կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալսն եւ զտաժանեալսն մեղօք, հանգիստ նոցա խոստանալով:
Շնորհեա եւ մեզ, Տէր, անխռով խաղաղութեամբ զգիշերս անցուցանել. եւ ի ծանրութենէ մեղաց զաշխատեալքս՝ ապահովեա ողորմութեամբ քով. եւ արժանաւորեա մշտնջենաւոր հանգստեանն ընդ ամենայն սուրբս քո: Եւ գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր եւ ամենասուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն
Աստուծոյ երկիրպագեսցուք

Պարգեւատու բարեաց, եւ աղբիւր խաղաղութեան, Տէր Աստուած մեր, յամենայն սատանայական խռովութեանց խաղաղացո զմիտս մեր եւ զխորհուրդս՝ ի գիշերիս յայսմիկ եւ յամենայն ժամանակի: Որպէս զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս՝ ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութեան քո. զոր պատրաստեցեր ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Նստիլ

ՍԱՂՄՈՍ ԻԶ. (ԻԷ.)

ՍՐԿ. Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմե՞ր երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմե՞ր դողացայց:

ԵՐԳ
(Ս. Ներսիսի Շնորհալուոյ)
«ՆԱՅԵԱՅ ՍԻՐՈՎ»

Նայեաց սիրով Հայրդ գթած
Ի Քո ստեղծեալ գործս ձեռաց.
Եւ զբանակս հրեշտակաց
Տուր պահապան մեզ տկարաց.

Եւ մենք՝ ամեն ատեն, աղաչենք որ մարդասերն Աստուած պահապան ըլլայ մեր անձերուն, եւ Ան՝ իր ողորմութեամբը պահպանէ զմեզ, եւ առաջնորդելով հասցնէ իր բարութեան հանգիստին, զոր ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս խոստացաւ իր սիրելիներուն: Ամենակալ Տէ՛ր, ողորմէ՛ եւ կեանք տո՛ւր:

Ա Ղ Օ Թ Զ

ՔՅԼՅ. Տէ՛ր բարերար, Դո՛ւն՝ որ Քու մեծ գթութեամբդ յաւիտենական հանգիստը պատրաստեցիր առաքիկութեամբ աշխատողներուն, եւ քաղցր ձայնով Քեզի կանչեցիր մեղքերով ծանրաբեռնուածներն ու տառապողները՝ հանգիստ խոստանալով անոնց: Մեզի ալ շնորհէ, Տէ՛ր, անխռով խաղաղութեամբ անցնել այս գիշերը, եւ մեղքերու ծանրութեան տակ ճնշուածներս պաշտպանէ՛ Քու ողորմութեամբդ, եւ արժանի ըրէ՛ Քու բոլոր սուրբերուդ հետ մշտնջենական հանգիստին: Որպէսզի գոհանալով փառաւորենք Քեզ՝ Հօրը եւ ամենասուրբ Հոգւոյդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութի՛ն բոլորին
Աստուծոյ երկրպագենք

Պարգեւատու բարիքներու եւ խաղաղութեան աղբիւր, Տէ՛ր Աստուած մեր, սատանայական բոլոր խռովութիւններէն խաղաղացուր մեր միտքն ու խորհուրդները, թէ՛ այս գիշեր եւ թէ՛ ամէն ժամանակ: Որպէսզի առաջնորդուելով անցաւոր այս կեանքին մէջ, հասնինք երկնային յաւիտենական թագաւորութեանդ, զոր աշխարհի սկիզբէն իսկ պատրաստեցիր Քու սուրբերուդ համար. եւ անոնց հետ գոհանալով փառաւորենք Հայրը, եւ Որդին եւ Սուրբ Հոգիդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Նստիլ

ՍԱՂՄՈՍ Ի2.(ԻԷ.)

ՍՐԿ. Տերը իմ լոյք եւ կեանքն է, ես ո՞րմէ պիտի վախնամ. Տերն է կեանքիս ապաւենը, ես ո՞րմէ պիտի դողամ:

Ե Ր Գ

(Ս. Ներսէս Շնորհալիի)
«ՆԱՅԵԱՑ ՍԻՐՈՎ»

Ո՛վ Հայրդ գթած, սիրով նայէ՛
Քու ձեռքերուդ ստեղծածներուն.
Եւ մեզ՝ տկարներուս, պահապան տո՛ւր
Հրեշտակներու բանակները:

Փրկեա զանձինս ի փորձանաց
Ի խաւարի շրջող դիւաց.
Չի ի տուրնջեան եւ գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Էին անեղ անսկզբան
Ծնունդ անճառ Որդի եւ Բան.
Որ արարեր զտիւ գործոյ
Եւ զգիշեր ի հանգիստ քնոյ.
Տուր ի ննջել աչաց մարմնոյ
Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ.
Չի ի տուրնջեան եւ գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Րաբուն հոգւոց բանաւորաց
Աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց.
Ի փակել դրանց բնութեանց մարմնոց
Լոյս տուր աչաց սրտից մերոց.
Ի գիշերաց առ քեզ կանխել
Ընդ հրեղինացն օրհնաբանել.
Չի ի տուրնջեան եւ գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Սուրբդ սրբոց Երրորդութիւն
Չմեզ մաքրեա քեզ բնակութիւն.
Շնորհեա ընդ մանկանցն առագաստի
Հանգչել ընդ քեզ ի յանկողնի.
Տուր զհայցուած բարեկամին
Չփոխ երից նկանակին.
Չի ի տուրնջեան եւ գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Երեւելի լոյս ստեղծեր
Չտիւ եւ զգիշեր բաժանեցեր.
Ծագեա մեզ Տէր ի գիշերի՝
Չճառագայթս իմանալի.
Տուր յամենայն ժամանակի՝
Չպահպանող աջ քո հովանի.
Չի ի տուրնջեան եւ գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր՝
Բորբոքեսցի ի հոգիս մեր.
Չխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ
Չլոյս գիտութեան քո փայլեսցէ.

Փրկէ՛ մեր անձերը փորձանքներէն,
 Խաւարի մէջ շրջող դէւերէն.
 Որպէսզի ցերեկ եւ գիշեր
 Անդադար փառք տանք Քեզի:

Բանդ Աստուած եւ Որդի,
 Անեղ, Անսկիզբն, անճառելի Ճնունդ,
 Որ ցերեկը աշխատելու՝
 Եւ գիշերը քունի հանգիստին համար ստեղծեցիր,
 Մեր մարմնոյ աչքերուն քուն՝
 Հոգւոյն ալ արթնութիւն տուր.
 Որպէսզի ցերեկ եւ գիշեր
 Անդադար փառք տանք Քեզի:

Բանական հոգիներու վարդապետ,
 Աղբիւր լոյսի, բաշխող շնորհներու.
 Մեր մարմիններու բնութեանց
 Դռներուն փակուած ատեն՝
 Լոյս տո՛ւր մեր սրտերու աչքերուն,
 Որ գիշերները կանուխ ելլելով,
 Հրեշտակներուն հետ Քեզ օրհնաբանենք.
 Որպէսզի ցերեկ եւ գիշեր
 Անդադար փառք տանք Քեզի:

Ո՛վ Սուրբդ սուրբերու՝ Երրորդութիւն,
 Մաքրէ՛ զմեզ՝ Քեզի իբրեւ բնակութիւն,
 Շնորհէ՛ առագաստի մանուկներու հետ միասին
 Քեզի հետ հանգչիլ անկողնի մէջ.
 Տո՛ւր բարեկամին փոխ խնդրած երեք նկանակները,
 Որպէսզի ցերեկ եւ գիշեր
 Անդադար փառք տանք Քեզի:

Տեսանելի լոյս ստեղծեցիր,
 Ցերեկն ու գիշերը բաժնեցիր.
 Տէ՛ր, այս գիշեր մեր մէջ ալ
 Իմանալի ճառագայթներդ ծագեցո՛ւր.
 Զու պահպանող աչ ձեռքդ,
 Ամէն ատեն պաշտպան տո՛ւր.
 Որպէսզի ցերեկ եւ գիշեր
 Անդադար փառք տանք Քեզի:

Երկրի վրայ ձգուած Զու սիրոյ կրակը,
 Թո՛ղ բորբոքի մեր հոգիներուն մէջ,
 Մեր սրտերուն խորհուրդները մաքրէ՛.
 Զու գիտութեանդ լոյսը շողացնէ,

Ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ
Չմիտս բոցով քո վառեսցէ.
Չի ի տուընջեան եւ գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Ի քեզ նայիմք լոյսդ անմատոյց
Ի զգայական ծածկեալ լուսոյ.
Որ վասն մեր եղար ի գրի
Եւ ննջեցեր ի տապանի.
Առ մեզ ննջեա արթուն բնութիւն,
Յերքեա զչարին ներգործութիւն.
Չի ի տուընջեան եւ գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Էիդ լուսոյ անստուերի
Պաղատանօք կամք առաջի.
Որ փակեալ դրամբք յերեկոյին՝
Երեւեցար մետասանին.
Ընդ Թովմայի առ քեզ գոչեմք
Տէր եւ Աստուած զքեզ դաւանեմք,
Էջ եւ առ մեզ յերեկոյիս,
Եւ տուր զողջոյն քո ի հոգիս:

Բամեալքս զքեզ Տէր աղաչեմք
Մեզ յօգնութիւն նայեա հայցեմք.
Պահապանդ Իսրայէլի
Անձանց մերոց լեր հովանի.
Օթեաեա՛ առ մեզ խաղաղարար
Եւ ննջեսցուք անխռովաբար.
Չի ընդ առաւօտս կանխեսցուք
Օրինել զքեզ ընդ Յօր հոգւով:

Գոչման փողոյն Գաբրիէլի՝
Որ ի վերջնումն գիշերի,
Լսել արա զմեզ արժանի,
Եւ աջակողմն օդեաց դասի.
Անշէջ վառեալ լոյս լապտերաց
Ըստ իմաստուն հինգ կուսանաց.
Չի ընդ փեսայիդ ի յառագաստ
Յարսունք հոգւով մտցուք ի փառս:

Հալածեա ի մէնջ, Տէր,
Նշանաւ խաչի քո
Չընդդիմամարտ եւ զաներեւոյթ զագանն.

Մեզ մահուան քունեն թո՛ղ արթնցնէ,
 Եւ Քու հրովոյ բոցավառէ՛.
 Որպէսզի ցերեկ եւ գիշեր
 Անդադար փառք տանք Քեզի:

Քեզի կը նայինք, անմատչելի՛ Լոյս,
 Որ զգայարանական տեսողութեամբ չես երեւիր.
 Դուն՝ որ մեզի համար գերեզաման դրուեցար,
 Եւ տապանի մէջ ննջեցիր,
 Մեր քով ննջէ՛, Ո՛վ արթուն բնութիւն,
 Եւ խափանէ՛ չարին ներգործութիւնը.
 Որպէսզի ցերեկ եւ գիշեր
 Անդադար փառք տանք Քեզի:

Անստուեր Լոյս՝ Է-իդ առջեւ
 Պաղատելով կեցած ենք.
 Դո՛ւն, որ յարութեան երեկոյին
 Փակուած դռնարէն մտար եւ
 Տասնըմէկներուն երեւեցար.
 Թովմասին հետ Քեզի կը գոչենք,
 Տէր եւ Աստուած կը դաւանինք.
 Այս երեկոյին ալ մեր քով իջի՛ր,
 Եւ ողջոյնդ տո՛ւր մեր հոգիներուն:

Հաւաքուածներս, Տէ՛ր, Քեզի կ'աղաչենք,
 Ստիկ ըրէ՛, մեզի համար օգնութիւնդ կը խնդրենք.
 Ո՛վ պահապանդ Իսրայէլի,
 Մեր անձերուն պաշտպան եղի՛ր.
 Ո՛վ խաղաղարար, մեր մօտ օթեւանէ՛
 Որպէսզի անխռով քնանանք,
 Եւ առտու կանուխ արթննալով՝
 Հոգիով օրհնենք Քեզ եւ Հօրը:

(Տէ՛ր) Արժանացո՛ւր զմեզ
 Լսելու՝ վերջին գիշերուան
 Գաբրիէլի փողին ձայնը.
 Եւ դասուելու աջակողմի ոչխարներուն:
 Իմաստուն հինգ կոյսերու նման,
 Թո՛ղ անշէջ վառին մեր լապտերներուն լոյսը.
 Որպէսզի հարսերու հոգիով մտնենք
 Փեսայիդ հետ՝ առագաստի փառքին:

Տէ՛ր, քու Խաչիդ նշանով,
 Հալածէ՛ մեզմէ
 Կռուող եւ աներեւոյթ գազանը.

Եւ մի տար յապականութիւն
Չքո ժառանգութիւնս:

Բարեխօսեա վասն մեր,
Աստուածածին Մարիամ,
Որ ծնար զՏէր Աստուած՝
Որ հովուէրն զԻսրայէլ
Ամենագոր եւ սքանչելի փառօքն իւրովք:

Ոտքի ելլել

ՄԱՂԹԱՆՔ

ԹՅՆՅ. Տէր, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. Տէր բարերար՝ աղաչեմ
զքեզ, օգնական իմ լիւր: Տէր՝ մի՛ անարգեր զիս, եւ մի՛ թողուր զիս
Աստուած Փրկիչ իմ:

ՔԱՐՈՉ

ՍՐԿ. Աղաչեսցուք զամենակալն Աստուած, եւ խնդրեսցուք ի նմանէ, զի
առաքեսցէ զիրեշտակ խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ զմեզ
յերկիւղական գիշերիս ի դիւական խռովութենէ, ամբողջ
պահելով զհոգի եւ զմարմին մեր մինչեւ ի կատարումն
ժամանակի ամաց մերոց: Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցուցէ
եւ ողորմեսցի:

ԱՂՕԹՔ

ԹՅՆՅ. Շնորհատու բարեաց՝ ամենայնի առատ անմահ Տէր, աղաչեմք
զքեզ, փարատեա յանձանց մերոց զաղջամղջին եւ զխաւարային
խորհուրդս: Ի պատրանաց բանսարկուին պահեա զմեզ. եւ
շնորհեա մեզ հաւատով ապաւինիլ յամենասուրբ
Երրորդութիւնդ, ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հոգիդ. այժմ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից. Ամեն:

Նստիլ

ՍԱՂՄՈՍ ԾԺԸ

ԴՊ. Երանեալ են ամբիօք ի ճանապարհի, եւ ոյք զնան յօրէսս Տեանն:

Երանի ոյք քննեն զվկայութիւն նորա, բոլորով սրտիւ իւրեանց
խնդրեսցեն զնա:

ԵՐԳ
«Ի ԲԷՆ ՀԱՅՑԵՄՔ»
[ԳԶ]

ԴՊ. Ի քէն հայցեմք, Հայր Գթութեանց
Եւ Աստուած միսիթարութեանց

Եւ մի՛ թոյլ տար որ պղտորին
Քու ժառանգներդ /հաւատացեալներդ/:

Ո՛վ Մարիամ Աստուածածին,
Որ ծնար Տէր Աստուածը.
Մեզի համար բարեխօսէ՛ (Անոր)
Որ Իսրայէլը առաջնորդեց՝
Իր ամենագօր եւ սքանչելի փառքովը:

Ուտքի ելլել

Մ Ա Ղ Թ Ա Ն Զ

ՔՅԼՅ. Տէ՛ր, երեսդ մի՛ դարձներ ինձմէ կ’աղաչեմ զՔեզ, Տէ՛ր բարերար, օգնական եղի՛ր ինծի: Տէ՛ր, մի՛ անարգեր զիս, եւ ո՛վ Փրկիչ իմ Աստուած, մի լքեր զիս:

Ք Ա Ր Ո Չ

ՍՐԿ. Աղաչենք ամենակարողն Աստուծոյ, եւ խնդրենք Անկէ, որ խաղաղութեան հրեշտակը դրկէ. որպէսզի գալով պահէ զմեզ՝ գիշերուան սարսափէն եւ սատանայական խռովութիւններէն, անեղծ պահելով նաեւ մեր մարմինն ու հոգին, մինչեւ մեր կեանքի տարիներու շրջանին լրանալը: Ամենակա՛լ Տէ՛ր Աստուած մեր ողորմէ՛ եւ ապրեցո՛ւր:

Ա Ղ Օ Թ Զ

ՔՅԼՅ. Ամմահ Տէ՛ր, բարեաց շնորհատու, առատածեռն ամենուն, կ’աղաչենք զՔեզ, փարատէ՛ մեր անձերուն մութ եւ խաւար մտածումները: Պահէ՛ զմեզ՝ բանսարկու սատանային խաբէ-
ութենէն, եւ շնորհէ՛ մեզի՝ հաւատքով ապաւինիլ Ամենասուրբ Երրորդութեանդ, Յօր եւ Որդւոյ եւ Սուրբ Յօգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամեն:

Նստիլ

ՍԱՂՄՈՍ ԾԺԸ

ԴՊ. Երանելի են ընթացքով անբիծները, եւ անոնք՝ որոնք Տիրոջ պատուրաններուն համաձայն կ’ընթանան:
Երանի անոնց, որոնք անոր օրէնքները կը պահեն, եւ իրենց ամբողջ սրտով կը փնտրեն զԱյն:

Ե Ր Գ
«Ի ԲԷՆ ՀԱՅՅԵՄԶ»
[ԳԶ]

ԴՊ. Կը խնդրենք Քեզմէ, Հայր գթութեանց,
Եւ Աստուած մխիթարութեանց,

Ի տխրական գիշերային մերձեալ ժամուս,
Մխիթարեա զմեզ ի տրտմութեանց մեղաց,
Եւ շնորհեա զուրախութիւն
Գործովք արդարութեան.
Աղաչանօք Սուրբ Աստուածածնին եւ ամենայն արդարոց:

Ըստ քաղցրագոյն աստուածային
Քո հրամանի կոչման, Որդի Աստուծոյ.
Եկեալ եմք, առաջի քո յերեկոյիս
Աշխատեալք եւ ծանրաբեռնեալք.
Թերեւացո ի ծանրութեանց մեղաց զանձիսս,
Եւ զօրացո բառնալ կամաւ զքաղցր լուծ քոց պատուիրանաց.
Աղաչանօք Սուրբ Աստուածածնին եւ ամենայն արդարոց:

Պաղատիմք առ քեզ հոգւով
Ի հանգստեան հասեալ ժամուս,
Մարդասէր Զոգի Աստուծոյ.
Յորժամ կորոզես զերեսս երկրի
Եւ վերստին ստանաս զոգիս մարդկան,
Նորափետուր զարդարեա
Չննջեցեալսն մեր զծնեալսն
Ի քէն սուրբ աւագանաւն.
Աղաչանօք Սուրբ Աստուածածնին եւ ամենայն արդարոց:

Չկենդանագիր անարատ ծնողի քո,
Արկանեմք առաջի անոխակալ տերութեանդ քո.
Յորժամ գաս փառօք Զօր դատել զթշնամին խաչի քո.
Ներեա՛ յանցանաց մերոց
Բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի.
Աղաչեմք զքեզ Տէր պահպանեա զմեզ
Ընդ հովանեալ խաչի քո սուրբ:

Չաղորդս արա՛ եւ զմեզ Տէր,
Ընդ սրբոց քոց Առաքելոցն,
Որք արժանի եղեն տեսանել զքեզ
Ի յարութեան քո.
Արժանաւորեա Տէր տեսանել զքեզ
Ի միսանգամ քո գալստեանն.
Օրհնութիւն առաքողին ի բարձունս:

Ի նստիլ քո յատենի դատաւոր ահեղ.
Աղաչանօք Սուրբ Աստուածածնին
Յիշեա զննջեցեալսն մեր,
Յորժամ գայցես անճառ փառօք.
Քանզի քո են փառք յաւիտեանս. ամէն:

Մօտեցող մելամաղձոտ գիշերուան այս ժամուն,
 Արդարութեան գործերով միսիթարե՛ գմեզ
 Մեղքերու մտատանջութիւններէն,
 Եւ ուրախութիւն շնորհե՛ մեզի՝
 Սուրբ Աստուածածնին եւ բոլոր արդարներուն աղաչանքներով:

Որդի՛ Աստուծոյ, Քու աստուածային
 Հրամայական քաղցր հրաւերիդ համաձայն,
 Առջեւդ եկած ենք
 Մինչեւ երեկոյ աշխատելով յոգնածներս եւ ծանրաբեռնուածներս:
 Թեթեւցո՛ւր մեր հոգիները՝ մեղքերու ծանրութիւններէն,
 Եւ զօրացո՛ւր մեզ սիրով տանելու՝
 Քու պատուիրաններով քաղցր լուծը,
 Սուրբ Աստուածածնին եւ բոլոր արդարներուն աղաչանքներով:

Մարդասէ՛ր Հոգի Աստուծոյ,
 Հանգստեան ժամուն հասնելով՝
 Հոգով կը պաղատինք Քեզի.
 Երբ երկրին երեսը կորոզես,
 Եւ մարդոց հոգիները վերստին ստանաս,
 Նորափետուր զարդարե՛
 Քու Սուրբ աւագանեդ ծնած մեր ննջեցեալները.
 Սուրբ Աստուածածնին եւ բոլոր արդարներուն աղաչանքներով:

Դո՛ւն, հարազատ ծնողիդ կենդանագիրը,
 Կ՛եկրպագենք Քու անխակալ Տերութեանդ առջեւ.
 Երբոր գաս Հօր փառքով՝ դատելու Քու կաջիդ թշնամիները,
 Սօրդ եւ Կոյսի բարեխօսութեամբ՝
 Ներե՛ մեր մեղքերուն,
 Կ՛աղաչենք Քեզի, Տէ՛ր, պահպանե՛ գմեզ՝
 Քու Սուրբ կաջիդ հովանիին տակ:

Տէ՛ր, մեզ ալ հաղորդակից ըրե՛
 Քու սուրբ Առաքեալներուդ,
 Որոնք արժանի եղան տեսնելու զՔեզ՝
 Քու յարութեանդ ատեն:
 Տէ՛ր, արժանի ըրե՛ (մեզի) տեսնելու զՔեզ՝
 Քու միւս անգամ գալստեանդ ժամանակ.
 Օրհնութիւն բարձունքներու մեջ Քեզ դրկողին:

Ո՛վ ահեղ դատաւոր,
 Ատեան նստած ատենդ՝
 Յիշե՛ մեր ննջեցեալները,
 Սուրբ Աստուածածնին աղաչանքներովը
 Վասնզի փառքը՝ յաւիտեանս Քուկդ Է. ամէն:

ՔՅԼՅ. Հոգւոցն հանգուցելոց, Քրիստոս Աստուած, արա հանգիստ եւ ողորմութիւն, եւ մեզ մեղաւորացս շնորհեա զթողութիւն յանցանաց:

ՔԱՐՈՉ

ՄԻԿ. Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք: Վասն հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս՝ զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ. եւ զմեզ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ տէր աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛.....:

Ա Ղ Օ Թ Ք

ՔՅԼՅ. Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ, գթա քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց: Յիշեա յաւուր մեծի զալստեան արքայութեան քոյ: Արա արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց: Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողման դասուն: Չի դու ես տէր եւ արարիչ ամենեցուն. դատաւոր կենդանեաց եւ մեռելոց: Եւ քեզ վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սո՛ւրբ եղիցի անուն Քո: Եկեսցէ՛ արքայութիւն Քո: Եղիցին կամք Քո որպէս յերկինս՝ եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Չի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Ուտքի ելլել

ՄԱՂԹԱՔ

ՔՅԼՅ. Քրիստոս Աստուած, ողորմե՛ հանգուցեալ հոգիներուն, հանգ-
չեցո՛ւր զանոնք, եւ թողութիւն շնորիե՛ մեղաւորներուս
յանցանքներուն:

ՔԱՐՈՉ

ՄԴ. Խաղաղութեան համար դարձեալ Տէրոջը աղերսենք: Աղաչենք մեր
փրկչին՝ Քրիստոսի, որ հանգուցեալ հոգիները արդարներուն
դասակից ընէ. եւ իր ողորմութեամբ մեզ ապրեցնէ: Ամենակալ
Տէր Աստուած մեր, փրկե՛ եւ ողորմե՛ մեզի:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.....:

Ա Ղ Օ Թ Ք

ՔՅԼՅ. Քրիստոս, Աստուծոյ որդի, անխակալ եւ բարեգութ, գթա քու
արարչական սիրովդ ՚ի Յոգիս քու հանգուցեալ ծառաներուդ:
Յիշե՛ անոնց քու արքայութեանդ գալստեան մեծ օրը: Արժանի ըրէ
անոնց ողորմութեան, քաւութեան եւ մեղքերու թողութեան:
Պայծառացուր զանոնք դասելով քու սուրբերուդ աջակողմեան
դասին: Որովհետեւ դո՛ւն ես Տէրը եւ Արարիչը բոլորի. Դատաւորը
ողջերու եւ մեռելներու: Եւ Քեզի կը վայելեն փառքը,
իշխանութիւնը եւ պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս . ամէն:

Հայր մեր, որ երկինքն ես, սուրբ թող ըլլայ Քու Անունդ: Քու
թագաւորութիւնդ թող գայ, Քու կամքդ թող ըլլայ, ինչպէս երկնքի
մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր
մեզի այսօր: Եւ ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս եւ մենք կը
ներենք մեր պարտապաններուն: Եւ մի՛ թողուր որ փորձութեան
մէջ իյնանք, այլ փրկե՛ մեզի չարէն: Քանզի Քուկդ եւ
Թագաւորութիւնը եւ Չօրութիւնը եւ Փառքը յաւիտեանս. ամէն:

ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Կարգաւորութիւն Հասարակաց աղօթից Հանգստեան Ժամուն,
Որ կատարի ի դէմս Հօր Աստուծոյ, զի պահպանողական աջով
Միաձնին Պահեսցէ զմեզ ի խաւարային գիշերիս

Ուտքի ելլել

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Բրիստոս. ամէն:

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սո՛ւրբ եղիցի անուն Զո: Եկեսցէ՛
արքայութիւն Զո: Եղիցին կամք Զո որպէս յերկինս՝ եւ յերկրի:
Չհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ
զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ
մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Չի Զո
է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

ԲՅՆՅ. Առաքեա Տէր զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն
ինձ եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

ՄՐԿ. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ
զմանկութիւն իմ: Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած
Աստուած իմ: Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր
խռովես զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա նմա՝ փրկիչ
երեսաց իմոց աստուած է:

ԲՅՆՅ. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

ՄՐԿ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն: Եւ եւս
խաղաղութեան գտեր աղաչեսցուք, ընկալ, կեցո՛ր եւ ողորմեա՛:

ԲՅՆՅ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Նստիլ

ՍԱՂՄՈՍ ԾԺԸ

ՄՐԿ. Եկեսցէ ի վրայ իմ ողորմութիւն քո, Տէր, եւ փրկութիւն քո ըստ
բանի քում:
Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք, զի ես ի բանս քո
յուսացայ:
Մի՛ ի բացեայ առներ ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան
մինչեւ յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ:
Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան եւ յաւիտեանս
յաւիտենից:

ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Կարգ Հասարակաց աղօթքի Հանգստեան Ժամի,
Որ կը կատարուի Հօր Աստուծոյ դիմաց,
Որպէսզի Իր Միածինի Պահպանող Աջով Խաւար գիշերը մեզի
պահպանէ

Ոտքի ելլել

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Բրիստոս. Ամէն

Հայր մեր՝ որ երկինքն ես. սուրբ թող ըլլայ Բու Անունդ: Բու թագաւորութիւնդ թող գայ. Բու կամքդ թող ըլլայ. ինչպէս երկնքի մէջ նոյնպէս երկրի վրայ: Մեր հանապազօրեայ հացը. տուր մեզի այսօր: Եւ ներքէ մեզի մեր պարտքերը. ինչպէս եւ մենք կը ներենք մեր պարտապաններուն: Եւ մի թողուր որ փորձութեան մէջ իյնանք, այլ փրկէ մեզի չարէն: Բանգի Բուկդ եւ Թագաւորութիւնը եւ Զօրութիւնը եւ Փառքը յաւիտեանս. ամէն:

ԹՅՆՅ. Տէ՛ր, Բու լոյսդ եւ ճշմարտութիւնդ դրկէ, որպէսզի առաջնորդեն ինձի, եւ հանեն զիսէ՛ Սուրբ լեռդ եւ Բու բնակարաններդ:

ՍՐԿ. Աստուծոյ քով, Աստուծոյ սեղանին առջեւ պիտի երթամ, որպէսզի ուրախացնէ իմ մանկութիւնս: Ո՛վ Աստուած, Աստուած՝ իմ, օրհնութեամբ պիտի խոստովանիմ Բեզ:Ուրեմն, ո՛վ իմ անձս, ինչո՞ւ տրտում ես, կամ ինչո՞ւ զիս կը խռովես: Աստուծոյ ապաւինէ, խոստովանէ Անոր«Աստուած է իմ փրկիչս»:

ԹՅՆՅ. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

ՍՐԿ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ, կեցո՛ր եւ ողորմեա՛:

ԹՅՆՅ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Նստիլ

ՍԱՂՄՈՍ ԾԺԸ

ԴՊ. Ով Տէ՛ր, Բու խօսքիդ համաձայն ողորմութիւնդ եւ փրկութիւնդ իմ վրաս թող գա՛ն:
Ես խօսքով պատասխան պիտի տամ զիս նախատողներուն, վասնզի քու խօսքերուդ ապաւինեցայ:
Ճշմարտութեանդ խօսքը մինչեւ վերջ իմ բերես մի՛ հեռացներ, վասնզի ես Բու արդարութեանդ ապաւինեցայ:
Միշտ՝ յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից Բու օրէնքդ պահեցի:

Քնայի ես յանդորրու, զի զպատուիրանս քո խնդրեցի:
Խօսեի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, եւ ոչ ամաչէի:

Խորհէի ի պատուիրանս քո զոր սիրեցի:

Համբարձի զձեռս իմ ի պատուիրանս քո զոր սիրեցի, եւ խորհէի
յարդարութեան քում:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից, ամէն:

ՄԱՂԹԱՆԸ

ՔՅԼՅ. Անձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ, եւ ի սուրբ խաչ քո յուսացեալ
եմ, թագաւոր երկնաւոր. զբազմութիւն սրբոց քոց բարեխօս
ունիմ առ քեզ: Որ երկայնամիտդ ես առ ամենեսեան, մի՛ անտես
առներ զապաւինեալս ի քեզ, այլ պահեա պատուական եւ սուրբ
խաչիւ քով ի խաղաղութեան:

ՔԱՐՈՉ

ՄԿ. Աղաչեսցուք զամենակալն Աստուած, եւ խնդրեսցուք ի նմանէ, զի
առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ զմեզ
յերկիւղական գիշերիս, ի դիւական խռովութենէ՝ ամբողջ
պահելով զհոգի եւ զմարմին մեր մինչեւ ի կատարումն
ժամանակի ամաց մերոց: Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցուցէ
եւ ողորմեսցի:

ՔՅԼՅ. Կեցո՛ Տէր:

ՄԿ. Չհանգիստ գիշերիս խաղաղութեամբ անցուցանել հաւատով՝ ի
Տեառնէ խնդրեսցուք:

ՔՅԼՅ. Շնորհեա՛ Տէր:

ՄԿ. Չհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց՝ ի
Տեառնէ խնդրեսցուք:

ՔՅԼՅ. Շնորհեա՛ Տէր:

ՄԿ. Չքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց՝ ի Տեառնէ
խնդրեսցուք:

ՔՅԼՅ. Շնորհեա՛ Տէր:

ՄԿ. Չսրբոյ խաչին մեծ եւ կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց
մերոց՝ ի Տեառնէ խնդրեսցուք:

Ես խաղաղ կ'ընթանայի. քանզի քու պատուիրաններդ փնտռեցի:
Քու վկայութիւններդ թագաւորներուն առջեւ կը խօսէի, եւ չէի
ամչնար:

Քու պատուիրանքներուդ մասին կը խորհէի, որոնք սիրեցի:
Ձեռքերս դէպի քու պատուիրանքներդ բարձրացուցի՝ որոնք
սիրեցի, եւ արդարութեանդ մասին կը խորհէի:

Փառք Յօր եւ Որդւոյ եւ Յոգւոյն Սրբոյ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից, ամէն:

ՄԱՂԹԱՆՔ

ՔՅՆՅ. Երկնաւոր թագաւոր, ես քու ձեռքերուդ մէջ եմ ամէն ժամ, եւ քու
Սուրբ Խաչիդ յուսացած եմ: Սուրբերուդ բազմութիւնը մեզի
համար բարեխօս ունիմ Քու առջեւդ: Դո՛ւն, որ ամենուն հանդէպ
հնմբերող ես, մի՛ անտեսեր Քեզի ապաւինողներս, այլ՝ պահէ՛ ի
խաղաղութեան քու սուրբ եւ պատուական Խաչիդ միջոցով :

ՔԱՐՈՉ

ՍՐԿ. Աղաչենք ամենակալ Աստուծոյ եւ ինդրենք, որպէսզի խա-
ղաղութեան հրեշտակը ղրկէ, որը գալով պահպանէ մեզի
երկիւղական այս գիշերին, դիւական խռովութիւններէն՝ անվնաս
պահելով մեր հոգիները եւ մարմինները մինչեւ մեր կեանքերու
վախճանը: Ամենակալ մեր Տէր Աստուածը թող մեզի ապրեցնէ եւ
ողորմէ:

ՔՅՆՅ. Ապրեցուր՝ Տէր:

ՍՐԿ. Այս գիշերուայ հանգիստը հաւատքով խաղաղութեամբ անցնելու
համար Տէրոջը ինդրենք:

ՔՅՆՅ. Շնորհէ՛ Տէր:

ՍՐԿ. Մեր անձերու խաղաղութեան պահապան հրեշտակը՝ Տէրոջմէ
ինդրենք:

ՔՅՆՅ. Շնորհէ՛ Տէր:

ՍՐԿ. Մեր յանցանքներուն քաւութիւն եւ գթողութիւն՝ Տէրոջմէ
ինդրենք:

ՔՅՆՅ. Շնորհէ՛ Տէր:

ՍՐԿ. Սուրբ խաչին մեծ եւ կարող զօրութիւնը մեր անձերու համար՝
Տէրոջմէ ինդրենք:

ՔՅԼՅ. Շնորհեա՛ Տեր:

ՍՐԿ. Եւ եւս՝ միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ՝ զՏեր աղաչեսցուք:

ՔՅԼՅ . Տեր ողորմեա՛:

ՍՐԿ. Չանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

ՔՅԼՅ. Քեզ՝ Տեառնդ յանձն եղիցուք :

ՍՐԿ. Ողորմեաց մեզ, Տեր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

ՔՅԼՅ. Տեր ողորմեա՛, Տեր ողորմեա՛, Տեր ողորմեա՛:

Ուտքի ելլել

Ա Ղ Օ Թ Ք

ՔՅԼՅ. Տեր Աստուած մեր, դու պահեա զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ եւ յամենայն ժամանակի: Ընդ սուրբ երկիւղ քո բեւեռեալ պահեա զմիտս եւ զխորհուրդս մեր: Որպէսզի յամենայն ժամ քեւ պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամոյն: Եւ քեզ հանցուք զօրհնութիւն եւ զփառս Զօր եւ Որդւոյ եւ Զոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն
Աստուծոյ երկիրպագեսցուք

Յրեշտակի խաղաղութեան յանձն արա զանձինս մեր, Տեր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ի տուէ եւ ի գիշերի, յարթութեան եւ ի հանգստեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ եւ հաստիչ գիշերի: Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տեր Աստուած մեր, զհանգիստ գիշերիս շնորհեա խաղաղութեամբ անցուցանել, եւ հասանիլ ի պաշտօն առաւօտու յերկրպագութիւն եւ ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԵՐԳ
ԵԿԵՍՅԷ ՏԵՐ.....
(տե՛ս ի Շարակնցն)

ՔՅՆՅ. Շնորհէ՛ Տէր:

ՍՐԿ. Դարձեալ՝ միաբան մեր ճշմարիտ եւ սուրբ հաւատքի համար՝ Տէրոջը աղաչենք:

ՔՅՆՅ. Տէր ողորմեա՛:

ՍՐԿ. Մեր անձերը եւ մեկզմեկ Տեառն Աստուծոյ ամենակալին յանձնենք:

ՔՅՆՅ. Քեզ՝ Տեառնդ յա՛նձն եղիցուք :

ՍՐԿ. Ողորմէ մեզ, Տէր Աստուած մեր, քու մեծ ողորմութեանդ համեմատ. բոլորս ալ միաբանութեամբ ըսենք:

ՔՅՆՅ. Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:

Ուտքի ելլել

Ա Ղ Օ Թ Ք

ՔՅՆՅ. Տէ՛ր Աստուած մեր, այս գիշերը եւ ամէն ժամանակ խաղաղութեամբ Դո՛ւն պահէ զմեզ: Մեր մտածումները եւ խորհուրդները Քու սուրբ երկիւղիդ վրայ բեւեռուած պահէ: Որպէսզի՝ միշտ քեզմով պահպանուած ըլլանք թշնամիին որոգայթներէն, եւ Քեզի օրհնութիւն եւ փառք մատուցենք, Յօր եւ Որդւոյ եւ ՍուրբՅոգևոյդ , այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն բոլորիդ
Աստուծոյ երկրպագենք

Տէ՛ր գօրութիւններու, խաղաղութեան Յրեշտակին յանձնէ՛ մեր անձերը, որ գալով պահպանէ՛ զմեզ անխռով գիշերը եւ ցերեկը, մեր անքուն եւ քնացած ատեն. վասնզի Դո՛ւն ես լույսին արարիչը եւ գիշերը հաստատողը: Ուստի այժմ, Տէր Աստուած մեր, Քեզի կ'աղաչենք. շնորհէ՛ մեզի խաղաղութեամբ անցնել այս գիշերուայ հանգիստը, եւ հասնիլ առաւօտեան ժամի պաշտամունքին /ժամերգութեանը/՝ երկրպագելու եւ փառաբանելու Ամենասուրբ Երրորդութիւնդ , այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԵՐԳ
ԵԿԵՍՅԷ ՏԷՐ.....
(տե՛ս Շարակնոցի մէջ)

Ուտքի ելլել

ՍԱՂՄՈՍ Դ.

ԴՊ. Ալէլուիա, ալէլուիա *Խաղաղութեամբ* յայս եւ ի սոյն ննչեսցուք եւ զարթօցուք. զի դու, տէր, միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ:

Ի կարդալ իմում լուար ինձ, Աստուած, ըստ արդարութեան. ի նեղութենէ ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ եւ լուր աղօթից իմոց:

Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, եւ ինդրէք զստութիւն:

Ծաներուք զի սքանչելիս արար Տէր սրբոյ իւրում. եւ Տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա:

Բարկանայք եւ մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք:

Մատուցէք պատարագս արդարութեան, եւ յուսացարուք ի Տէր:

Բազումք ասէին թէ ո՞ ցուցցէ մեզ զբարութիւն Տեան.

Նշանացաւ առ մեզ լոյս երեսաց քոց, եւ ետուր ուրախութիւ սրտից մերոց.

Ի պտղոյ ցորենոյ, զինւոյ եւ ձիթոյ լցուցեր զնոսա:

ՄՐԿ. Ալէլուիա Օրթի:

ԲՅՆՅ. *Խաղաղութիւն ամենեցուն:*

ԴՊ. *Եւ ընդ հո՛գւոյդ քո՛ւմ:*

ՄՐԿ. *Երկիւղածութեա՛մբ լուարո՛ւք:*

ԲՅՆՅ. *Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Բրիստոսի որ ըստ Յովհաննու:*

ԴՊ. *Փա՛ռք քեզ Տէ՛ր Աստուած մե՛ր:*

ՄՐԿ. *Պռօ՛սխումէ՛:*

ԴՊ. *Ասէ Ա՛ստուա՛ծ:*

ԲՅՆՅ. *Տէրն մեր Յիսուս Բրիստոս ասէ:*

Ամեն ամեն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ: Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա, եւ որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ի կեանսն յաւիտենականս պահեցցէ զնա: Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեցցէ. եւ ուր եսն

Ոտքի ելլել

ՍԱՂՄՈՍ Դ.

Դպ. Ալելուիա, ալելուիա, Այս խաղաղութեամբ քանանք, եւ ասով արթնանք. վասնզի Դո՛ւն, Տէ՛ր, մասնաւորաբար այդ Քու լոյսովդ միայն ապրեցուցիր մեզ:

Երբ ես քեզի դիմեցի, լսեցիր զիս, ով Աստուա՛ծ իմ, որովհետեւ արդար ես. նեղութեանս մէջ հանդարտեցուցիր զիս. ողորմէ՛ ինծի եւ լսէ՛ աղօթքներս:

Դո՛ւք մարդի՛կ, մինչեւ ե՛րբ կարծրասիրտ պիտի մնաք. ինչո՞ւ համար կը սիրէք ունայնութիւնը եւ կը նախընտրէք ստութիւնը: Գիտցէ՛ք, որ Տէրը հրաշքներ գործեց ինծի՝ իր ընտրեալին համար, եւ ան զիս պիտի լսէ, երբ իրեն դիմեմ:

Եթէ բարկանաք իսկ՝ մեղք մի՛ գործէք, եւ ինչ ալ որ խորհիք ձեր սրտերուն մէջ՝ քննալէ առաջ զղջացէ՛ք:

Ձեր զոհերը արդարութեամբ մատուցանեցէք եւ ձեր յոյսը Տիրոջ վրայ դրէք:

Շատերը կ'ըսէին՝ «Ո՞վ մեզի բարիք պիտի կատարէ»:

Բայց քու դէմքիդ լոյսը մեր վրայ ճառագայթեցիր եւ ուրախութիւն շնորհեցիր մեր սրտերուն:

Դուն լեցուցիր զանոնք ցորենի, գինիի եւ ձեթի բերքով:

ՍՐԿ. [Ալելուիա], օրթի (ոտքի):

ԲՅՆՅ. Խաղաղութիւն բոլորին:

ԴՊ. Եւ քու հոգիիդ հետ:

ՍՐԿ. Երկիւղածութեամբ լսեցէ՛ք:

ԲՅՆՅ. Յիսուսի Բրիստոսի Սուրբ Աւետարանէն որ ըստ Յովհաննէսի

ԴՊ. Փա՛ռք Բեզ, Տէր Աստուած մեր:

ՍՐԿ. Պռօսփումէ / Ուշադրութիւն/:

ԴՊ. Աստուած կըսէ:

ԲՅՆՅ. Տէրն մեր Յիսուս Բրիստոս կ'ըսէ.

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. եթէ ո՛չ ցորենի հատիկը հողին մէջ իյնալով չմեռնի՝ միայն ինքը կը մնայ, իսկ եթէ մեռնի՝ շատ արդիւնք կու տայ: Ով որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ով որ այս աշխարհի մէջ կ'ատէ իր անձ՝ պիտի պահէ զայն յաւիտենական կեանքի համար: Եթէ մեկը ինծի ծառայէ՝ Իմ

եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտեսցէ, պատուեսցէ զնա Յայրն իմ:

ՔԱՐՈՉ

ՄԻԿ. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Ա Ղ Օ Թ Զ

ԲՅԼՅ. Պահպանեա զմեզ, Զրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ քով ի խաղաղութեան, փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Յօր եւ ընդ Սրբոյ Յօգևոյր. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Օրհնեալ Տէր մեր Յիսուս Զրիստոս. ամէն:

Յայր մեր, որ յերկիսս ես, սո՛ւրբ եղիցի անուն Զո: Եկեսցէ՛ արքայութիւն Զո: Եղիցին կամք Զո որպէս յերկիսս՝ եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Չի Զո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

ԲՅԼՅ. Անկանիմք առաջի քոյ, սուրբ Աստուածածին, եւ աղաչեմք զանարատ զկոյսդ, բարեխօսեա վասն անձանց մերոց, եւ աղաչեա զՄիածին Որդիդ փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

Ն Ա Ր Ե Կ

ԲԱՆ ԺԲ. - հատ. Գ.

Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին Յսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի,

Ի ԽՈՐՈՅ ՄՐՏԻ ԽՕՍԶ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Մաղթանք զօրաւորք...

Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս. մատիր գթութեամբ առ պատկառեալս դիմօք. փարատեա, ամենապարգեւ, զամօթական տխրութիւնս. բարձ յինէն, ողորմած, զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա, հնարաւոր, զմահացու կրթութիւնս. աւարեա, միշտ յաղթող,

Ետեւէս պէտք է գայ. եւ ուր որ ես եմ, այնտեղ եւ պէտք է ըլլայ Իմ ծառաս. մէկը Ինծի ծառայէ՝ Յայրս ալ պիտի պատուէ գայն:

Ք Ա Ր Ո Չ

ՍՐԿ. Փառք քեզ Տէր Աստուած մեր: Սուրբ Խաչով Տիրոջը աղաչենք, որպէսզի սրանով փրկէ մեզ մեղքերէն եւ Իր ողորմութեան շնորհով պահէ մեզ: Ամենակալ Տէր Աստուած մեր, ապրեցուր՝ եւ ողորմէ՛:

Ա Ղ Օ Թ Զ

ՔՅԼՅ. Պահպանէ՛ մեզ, Քրիստոս Աստուած մեր, Զու սուրբ եւ պատուական Խաչիդ հովանիին տակ խաղաղութեամբ: Փրկէ՛ երեւելի եւ աներեւոյթ թշնամիէն: Արժանացուր՝ գոհութեամբ փառաւորել քեզ՝ Յօր եւ Սուրբ Յոգևոյդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս . ամէն:

Յայր մեր՝ որ երկինքն եւ. սուրբ թող ըլլայ Զու Անունդ: Զու թագաւորութիւնդ թող գայ. Զու կամքդ թող ըլլայ. ինչպէս երկնքի մէջ նոյնպէս երկրի վրայ: Մեր հանապազօրեայ հացը. տուր մեզի այսօր: Եւ ներէ մեզի մեր պարտքերը. ինչպէս եւ մենք կը ներենք մեր պարտապաններուն: Եւ մի թողուր որ փորձութեան մէջ իյնանք, այլ փրկէ մեզի չարէն: Զանգի Զուկդ են Թագաւորութիւնը եւ Չօրութիւնը եւ Փառքը յաւիտեանս. ամէն:

ՔՅԼՅ. Զու առաջդ կը խոնարհիկնք սուրբ Աստուածածին, եւ կաղաչենք անարատ կոյսեդ, բարեխօսէ մեր համար, եւ աղաչէ միածին Որդիիդ, որ փրկէ մեզ փորձութիւնէ եւ ամէն վտանգէ:

Ն Ա Ր Ե Կ
ԲԱՆ ԺԲ.- հատ Գ.

Նոր յաւելուած վերստին հեծութեան՝ նոյն Յսկողէն, աղերսական մաղթանքի միեւնոյն նպատակով՝

ՄՐՏԻ ԽՈՐԵՐԷՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ԽՕՍԸ

Չօրաւոր մաղթանքներ . . .

Սիրով ընդունէ՛, հզօր Տէր Աստուած, ինծի պէս դառնացածին աղաչանքը. գթութեամբ մօտեցի՛ր ամօթահարիս, ո՛վ ամենապարգեւ, փարատէ՛ պատկառանքի տխրութիւններս. վերցո՛ւր վրայէս, ո՛վ ողորմած, անտանելի ծանրութիւններս, աւարի տո՛ւր, ո՛վ մշտայաղթ, խաբող գգանքները. հեռացո՛ւր ինձմէ, ո՛վ

զխաբողին հաճութիւնս. բացադրեա, վերնային, գմուլելոյն մառախուղ. կնքեա, կեցուցիչ, գկորուսչին ընթացմունս. ցրուեա, ծածկատես, զըմբռնողին չար գտմունս. խորտակեա, անքննին, գմարտողին դիմեցմունս: Տեառնագրեա քո անուամբդ զլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ գմուտ սեմոց սենեկիս. կերպացո զքո Նշանդ ի հետս ելից մաղթողիս. ամրացո քո աջովդ զհանգստեանս խշտի. մաքրեսցես ի հաղբից գծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ գտառապեալ անձն ոգւոյս, անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեսցես ի դիմի ընդդէմ դիւացն դասու: Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց Սրբուհւոյ Աստուածածնիդ՝ եւ ամենայն ընտրելոց: Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից, անզարհուրելի գետեղմամբ ի ծփական խռովութեանց, կենցաղական զբաղմանց, անրջական երագոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ: Եւ սթափեալ վերստին ի ննջմանէ ծանրութեան ամենազգաստ արթնութեամբ, հոգենորոգ զուարթութեամբ ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց քեզ, ամենօրինեալ թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ, յերկինս առաքել: Չի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ա Ղ Օ Թ Ք Չ Օ Ր Ա Ի Ո Ր

Նորին սրբոյն Գրիգորի

Բան ԽԱ.

Որդի Աստուծոյ կենդանւոյ օրինեալդ յամենայնի, Յօրդ ահաւորի անքննին ծնունդ, որ տկարանայ առ ի քէն եւ ո՛չինչ: Որ ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քոյ փառաց՝ հալին մեղք. հալածին դեւք. ջնջին յանցանք. խզին կապանք. խորտակին շղթայք. կենդանաձնին մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վերք. բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք. նահանջին հեծութիւնք. փախնու խաւարն. մեկնի մէզն. մերժի մառախուղն. փարատի մռայլն. սպառի աղջամուղջն. վերանայ մութն. գնայ գիշերն. տարագրի տագնապն. չքանան չարիքն. հալածին յուսահատութիւնք, եւ թագաւորէ՝ ձեռն քո ամենակար՝ քաւիչդ ամենայնի:

Որ ո՛չ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ: Չի դու միայն

հնարաւոր, մահացու մղումները. անդին տա՛ր, ո՛վ վերնային, կատղածին մառախուղը. մի՛ թողուր, ո՛վ կեցուցիչ, որ կորուսիչը վրաս վազէ. ցիր ու ցան ըրէ՛, ով ծածկատես, ըմբռնողին ծուղակները. ետ մղէ՛, ով անքնին, կռուողին դիմեցումները. անունո՛վդ տեառնագրէ՛ երդիքիս լուսամուտը. ձեռքովդ պահպանէ՛ սրահիս առաստաղը. արիւնովդ գծագրէ՛ սենեակիս սեմը. խաչիդ ձեւը դիր աղօթողիս ճամբուն վրայ. աջովդ ապահովէ՛ հանգստեանս խշտին. թակարդներէ մաքրէ՛ անկողնիս ծածկարանը. կամքովդ հովանաւորէ՛ տառապած հոգիս. անվնասելի ըրէ՛ մարմինիս շնորհած կենդանութեան շունչդ. երկնային զօրքիդ հոյլը շրջափակ կեցո՛ւր. դեւերու խումբերու դէմ: Խորունկ գիշերուան մէջ բերկրալից հանգիստ տո՛ւր մահանման քունիս, Սուրբ Աստուածածնիդ եւ բոլոր սուրբերուն բարեխօսութեամբը. Տեսութեանս պատուահանները, որոնք մտքին զգայարանքներն են, այնպէս մը շրջապատէ՛, պարուրէ, որ խօլական ցնորքներէ Քու յոյսիդ յիշատակովը պահպանուին անվնաս: Որպէսզի երբ ծանր քունէն արթննամ, ամենազգաստ եւ հոգեւորոզ զուարթութեամբ առջեւդ կեցած, ո՛վ անճառելի փառքերով ամենօրինեալ թագաւոր, փառաբանող երկնագումար խումբերուն երգակցելով՝ կարենամ հաւատքի բերումով դէպի երկինք Քեզի ուղղել իմ մաղթանքին ձայնը: Վասնզի Դուն քու բոլոր արարածներդ փառաւորուած ես, յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ա Ղ Օ Թ Զ Զ Օ Ր Ա Ի Ո Ր

Նորին սրբոյն Գրիգորի

Բան ԽԱ.

Կենդանի Աստուծոյ ամենօրինեալ Որդի, ահաւոր Զօրդ անքննին ծնունդն ես Դուն. Քեզի համար չկայ բնաւ անկարելի բան. Քու ողորմութեանդ փառքին անստուեր նշոյլները երբ կը ծագին, մեղքերը կը հալին, դեւերը կը հալածուին, յանցանքները կը ջնջուին, կապանքները կը խզուին, շղթաները կը խորտակուին, մահացածները կը կենդանաձնին, հարուածները կը բժշկուին, վերքերը կ'առողջանան, ապականութիւնները կը վերցուին, տխրութիւնները տեղի կուտան, հեծութիւնները կը նահանջեն, խաւարը կը փախչի, մեզը կը մեկնի, մառախուղը կը հեռանայ, մռայլը կը փարատի, աղջամուղջը կը սպառի, մութը կը վերանայ, գիշերը կ'անցնի, տագնապը կը տարագրուի, չարիքները կը չքանան, յուսահատութիւնները կը հալածուին, ու Քու ամենակարող ձեռքդ կը թագաւորէ, ո՛վ քաւիչդ ամենայնի:

Դուն որ եկար ո՛չ թէ կորսնցնելու՝ այլ ապրեցնելու մարդոց հոգիները, ներէ՛, Քու առատ ողորմութեամբդ, իմ անթիւ

Ես յերկնի անճառ եւ յերկրի անզնին, ի տարր գոյի եւ յեզր ծագաց աշխարհի. սկիզբն ամենայնի եւ յամենայնի. ամենայնի լրմամբ օրինեալդ ի բարձունս. եւ քեզ ընդ Յօր եւ Յոգւոյդ Սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

Ուտքի ելլել

ԱՂՕԹՔ
«ՅԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱԼԻՄ»
(Ս. Ներսիսի Շնորհալոյ)

Յաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ քեզ, Յայր եւ Որդի եւ Սուրբ Յոգի, անեղ եւ անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց. ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Յաւատով խոստովանիմ, եւ երկիրպագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն եւ մի աստուածութիւն, արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի. հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեան, եւ լուսաւորեա զմիտս ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս, եւ ընդունել ի քէն զխնդրուածս իմ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Յայր երկնաւոր Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս եւ առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, եւ զգեցո ինձ զպատմուճանն զառաջին զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Որդի Աստուծոյ Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, եւ առեր մարմին ի Սրբոյ Կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար, թաղեցար եւ յարեար ի մեռելոց, եւ համբարձար փառօք առ Յայր. մեղայ յերկինս եւ առաջի քո, յիշեա զիս որպէս զաւազակն յորժամ գաս արքայութեամբ քով. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Յոգի Աստուծոյ Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի վերնատունն եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս եւ առաջի քո, մաքրեա զիս վերստին աստուածային հրով քո՝ որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

չարիքներու. վասնզի Դո՛ւն միայն երկինքի մէջ անճառելի ես եւ երկրի վրայ անզննելի. գոյականներուն նախատարրին եւ աշխարհի եզրգծայրերուն մէջն ես Դուս. ամէն բանի մէջ ամբողջ. օրինեալ եղիր բարձունքներու մէջ, ու Քեզիէ Զօրը եւ Սուրբ Զոգիին հետ փառք յաւիտեանս. ամէն:

Ուտքի ելլել

Ա Ղ Օ Թ Ք
«ՅԱԲԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ»
(Ս. Ներսէս Շնորհալիի)

Հաւատքով կը խոստովանիմ եւ կ'երկըրպագեմ Քեզ, Հայր եւ Որդի եւ Սուրբ Զոգի, անեղ եւ անմահ բնութիւն, Արարիչ՝ հրեշտակներու եւ մարդոց, եւ բոլոր արարածներու, ողորմէ՛ Քու արարածներուդ, եւ ինծի՝ բազմամեղիս:

Հաւատքով կը խոստովանիմ եւ կ'երկըրպագեմ Քեզ, անբաժանելի Լոյս. միասնական Սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն. Արարիչ Լոյսի, եւ հալածիչ խաւարի. հալածէ՛ իմ հոգիես՝ մեղքի եւ անգիտութեան խաւարը, եւ լուսաւորէ՛ իմ միտքս, որ այս պահուս Քեզ հաճելի կերպով աղօթեմ, եւ Քեզմէ ընդունիմ իմ խնդրուածքներս. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ, եւ ինծի՝ բազմամեղիս:

Հա՛յր երկնաւոր, Աստո՛ւած ճըշմարիտ, որ Քու սիրելի Որդիդ զրկեցիր՝ մոլորեալ ոչխարը փնտռելու համար: Մեղա՛յ երկնքի դէմ եւ Քու առջեւդ. իբրեւ անառակ որդին ընդունէ զիս, եւ զգեցո՛ր ինծի առաջին պատմուճանը, զոր մերկացայ մեղքերուս պատճառաւ. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ. եւ ինծի՝ բազմամեղիս:

Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ որ խոնարհեցար հայրական ծոցէն, եւ մեր փրկութեան համար մարմին առիր Սուրբ կոյս Մարիամէն: Խաչուեցար, թաղուեցար, եւ մեռելներէն յարութիւն առիր, եւ փառքով համբարձար Զօրը քով: Մեղա՛յ, երկնքի դէմ եւ քու առջեւդ, յիշէ՛ զիս աւազակին պէս, երբ Քու Թագաւորութեամբդ գաս. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ, եւ ինծի՝ բազմամեղիս:

Զոգի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ. որ իջար Յորդանան եւ վերնատունը, եւ լուսաւորեցիր զիս Սուրբ աւազակին մկրտութեամբ: Մեղա՛յ, երկնքի դէմ եւ Քու առջեւդ. վերստին մաքրէ՛ զիս՝ Քու աստուածային կրակովդ, ինչպէս մաքրեցիր Սուրբ Առաքեալներդ. եւ ողորմէ՛ Քու արարածներուդ, եւ ինծի՝ բազմամեղիս:

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով եւ մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով բանիւ եւ գործով, ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, եւ գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, թողութիւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծննդէնէ սուրբ արագանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ քո զգայարանօք իմովք, եւ ամենայն անդամօք մարմնոյս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Ամենախնամ Տէր, դիր պահապան աջաց իմոց գերկիւղ քո սուրբ ո՛չ եւս հայիլ յայրատ, եւ ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել լսել զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ո՛չ խորհել զչարութիւն. եւ ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ո՛չ գնալ ի ճանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա զշարժումս սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Յուր կենդանի Զրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ, զի այրեցէ զաղտ հոգւոյ իմոյ, եւ սրբեցէ զխիղճ մտաց իմոց, եւ մաքրեցէ զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Իմաստութիւն Յօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Կամեցող բարեաց Տէր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Արքայ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո զոր խոստացար սիրելեաց քոց, եւ զօրացո զսիրտ իմ ատել զմեղս, եւ սիրել զքեզ միայն, եւ առնել զկամս քո. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Անեղ բնութիւն, մեղա՛յ Քեզ, մտքովս, հոգւովս եւ մարմնովս. Քու Սուրբ Անուկիդ սիրոյն. մի՛ յիշեր իմ առաջուան մեղքերս. եւ ողորմե՛ Քու արարածներուդ, եւ ինծի՛ բազմամեղիս:

Տեսող ամենայնի, մեղա՛յ Քեզ, խորհրդով, խօսքով եւ գործով. ջնջե՛ մեղքերուս ձեռագիրը, եւ արձանագրե՛ իմ անուսս կենաց գրքին մէջ. եւ ողորմե՛ Քու արարածներուդ, եւ ինծի՛ բազմամեղիս:

Քննող գաղտնեաց, մեղա՛յ Քեզ կամքովս եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. թողութիւն շնորհե՛ մեղաւորիս. վասնզի՛ Սուրբ Աւագանէն ծնելէս մինչեւ այսօր, զգայարանքներովս եւ մարմնոյս բոլոր անդամներովը, մեղանչած եմ Քու Աստուածութեանդ առջեւ եւ ողորմե՛ Քու արարածներուդ, եւ ինծի՛ բազմամեղիս:

Ամենախնամ Տէ՛ր, Քու Սուրբ վախդ՝ պահապան դի՛ր իմ աչքերուս. որ այլէս չնայիմ ցանկութեամբ, եւ իմ ականջներուս՝ որ չախորժիմ չար խօսքեր լսելէ, եւ իմ բերանիս՝ որ սուտ խօսքեր չխօսիմ, եւ իմ սրտիս՝ որ չարութիւն չխորհիմ, եւ իմ ձեռքերուս՝ որ անիրաւութիւն չգործեմ, եւ ոտքերուս՝ որ անօրէնութեան ճամբաներ չքալեմ. այլ՝ ուղղե՛ ասոնց շարժումը, որպէսզի միշտ Քու պատուիրաններուդ համաձայն ըլլան ամէն բանի մէջ. եւ ողորմե՛ Քու արարածներուդ. եւ ինծի՛ բազմամեղիս:

Յուր կենդանի Զրիստո՛ս, Քու սիրոյդ կրակը՝ զոր աշխարհի վրայ ձգեցիր թող բորբոքի իմ սրտիս մէջ. որպէսզի այրե իմ հոգւոյս աղտերը, եւ սրբե խղճմտանքս, եւ մաքրե մարմնոյս մեղքերը, եւ իմ սրտիս մէջ վառե Քու գիտութեանդ Լոյսը. եւ ողորմե՛ Քու արարածներուդ, եւ ինծի՛ բազմամեղիս:

Իմաստութիւն Յօր Յիսո՛ւս, իմաստութիւն տուր ինծի՛ որ ամէն ժամ Քու առջեւ բարի բաներ խորհիմ, խօսիմ, եւ գործեմ. եւ փրկե՛ զիս՝ չար խորհուրդներէ եւ գործերէ եւ ողորմե՛ Քու արարածներուդ, եւ ինծի՛ բազմամեղիս:

Կամեցող բարեաց, Տէ՛ր կամակատար, մի՛ թողուր զիս որ անձնասպան ըլլամ, այլ առաջնորդե՛ ինծի որ միշտ Քու բարեսէր կամքիդ համաձայն ըլլամ. եւ ողորմե՛ Քու արարածներուդ, եւ ինծի՛ բազմամեղիս:

Արքա՛յ երկնաւոր, տո՛ւր ինծի Քու Արքայութիւնդ, զոր խոստացար Քու սիրելիներուդ, եւ զօրացո՛ւր իմ սիրտս, որպէսզի ատեմ մեղքը, եւ զՔեզ միայն սիրեմ, եւ Քու կամքդ կատարեմ. եւ ողորմե՛ Քու արարածներուդ, եւ ինծի՛ բազմամեղիս:

Խնամող արարածոց, պահեա նշանաւ խաչի քո զհոգի եւ զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց, եւ ի մարդոց անհրաւաց, եւ յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Պահապան ամենայնի Զրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի՛ երբեք սասանեցայց. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով. քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ յայսմիտեւ մինչեւ յաւիտեան. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Դարձուցիչ մոլորելոց, դարձո՛ր զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն, եւ բելեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, եւ զերկիւղ գեհեՆոյն, եւ զսէր արքայութեանն, զի զղջացայց ի մեղաց, եւ գործեցից զարդարութիւն. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Աղբիւր անմահութեան. աղբերացո ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Պարգելիչ ողորմութեան, պարգեւեա ինձ ուղղափառ հաւատով, եւ բարի գործով, եւ սուրբ մարմնոյ եւ արեան քո հաղորդութեամբ զալ առ քեզ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Բարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, եւ անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն, որ են ի ներքոյ երկնից. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Լոյս ճշմարիտ Զրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն, եւ հանգչել յուսով բարեաց յօթեվանս արդարոց մինչեւ յօր մեծի զալստեան քո, եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր դատել զկենդանիս եւ զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. այլ

Խնամո՞ղ արարածոց, Քու խաչիդ նշանով պահե՛ իմ հոգիս եւ մարմինս՝ մեղքի խաբէութիւններէն, դէւերու փորձութիւններէն, եւ անիրաւ մարդոցմէն, եւ հոգիի եւ մարմնի ամէն տեսակ վտանգներէն. եւ ողորմե՛ Քու արարածներուդ, եւ ինծի՝ բազմամեղիս:

Պահապան ամենայնի Քրիստո՞ս, Քու աջ ձեռքդ հովանի թող ըլլայ իմ վրաս, գիշեր եւ ցերեկ, տան մէջ նստած, ճամբայ քալած, քնացած եւ արթնցած պահերուս. որպէսզի երբեք չսասանիմ. եւ ողորմե՛ Քու արարածներուդ, եւ ինծի՝ բազմամեղիս:

Աստուա՛ծ իմ, Դո՛ւն՝ որ ձեռքդ կը բանաս, եւ Քու ողորմութեամբդ կը կշտացնես բոլոր արարածներդ, քեզի կը յանձնեմ իմ անձս՝ այսօրուընէ մինչեւ յաւիտեան: Դո՛ւն, հոգա՛ եւ պատրաստե՛ իմ հոգւոյս եւ մարմնոյս բոլոր կարիքը. եւ ողորմե՛ Քու արարածներուդ, եւ ինծի՝ բազմամեղիս:

Դարձուցի՛չ մոլորելոց, դարձո՛ւր զիս իմ չար սովորութիւններէս՝ դէպի բարի սովորութիւն, եւ բեւեռե՛ իմ հոգւոյս մէջ մահուան սոսկալի օրը, դժոխքի սարսափը, եւ Արքայութեանդ սերը. որպէսզի զղջամ իմ մեղքերուս համար, եւ արդարութիւն գործեմ. եւ ողորմե՛ Քու արարածներուդ . եւ ինծի՝ բազմամեղիս:

Աղբի՛ւր անմահութեան, պոռնկին պէս՝ ապաշխարութեան արցունքներ հոսեցո՛ւր իմ սրտէս, որպէսզի այս աշխարհէն դեռ չմեկնած՝ իմ անձիս մեղքերը լուամ. եւ ողորմե՛ Քու արարածներուդ . եւ ինծի՝ բազմամեղիս:

Պարգեւի՛չ ողորմութեան, շնորհե՛ ինծի ուղղափառ հաւատքով՝ բարի գործով՝ եւ Սուրբ Մարմնոյդ եւ Արեանդ ճաշակումով գալ քեզի. եւ ողորմե՛ Քու արարածներուդ . եւ ինծի՝ բազմամեղիս:

Բարերա՛ր Տե՛ր, բարի հրեշտակի մը յանձնե իմ անձս, որպէսզի քաղցրութեամբ աւանդեմ հոգիս, եւ անխռով անցնեմ՝ երկնքի ներքեւ գտնուող չարութեան դէւերու մէջէն. եւ ողորմե՛ Քու արարածներուդ . եւ ինծի՝ բազմամեղիս:

Լոյս ճշմարիտ Քրիստո՞ս, արժանացո՛ւր իմ հոգիս մահուան կանչելուդ օրը ուրախութեամբ տեսնելու քու փառքերուդ Լոյսը, եւ արդարներու օթեւանին մէջ հանգչելու բարիքներու յոյսով, մինչեւ քու գալստեանդ մեծ օրը. եւ ողորմե՛ Քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս:

Դատաւո՛ր արդար, երբ Զօր փառքով գաս ողջերն ու մեռելները դատելու, քու ծառայիդ հետ դատավարութեան մի՛ մտներ, այլ

փրկեա զիս ի յաւիտենական հրոյն, եւ լսելի արա ինձ
զերանաւետ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. եւ
ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց եւ
օտարաց, ծանօթից եւ անծանօթից, կենդանեաց եւ մեռելոց.
շնորհեա եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց զթողութիւն որ առ իս
յանցանացն, եւ դարձո զնոսա ի չարեացն զոր ունին վասն իմ, զի
ողորմութեան քում արժանի եղիցին. եւ ողորմեա քո արարածոց
եւ ինձ բազմամեղիս:

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայիս քո, եւ կատարեա
ի բարի զխնդրուածս իմ, բարեխօսութեամբ Սրբուհոյ
Աստուածածնին, եւ Յովհաննու Մկրտչին, եւ Սրբոյն Ստեփանոսի
Նախավկային, եւ Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, եւ Սրբոց
Առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց,
հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց եւ ամենայն սրբոց քոց
երկնաւորաց եւ երկրաւորաց: Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն
անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, յաւիտեանս յաւիտենից.
Ամէն:

Ծուևկի գալ

ԵՐԳ

Դպ.- Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա,
Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն,
Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ հիւանդաց բժշկութիւն,
Ննջեցելոց Արքայութիւն:
(կամ) Ազգիս հայոց սէր միութիւն,
(եւ կամ) Ազգիս հայոց այցելութիւն:

Արի՛ Աստուած հարցն մերոց,
Որ ապաւենդ ես նեղելոց,
Հա՛ս օգնութիւն ծառայից քոց,
Լե՛ր օգնական ազգիս հայոց:

Ե՛կ, Տէր Յիսուս ողորմեաց մեզ,
Ողորմութեան դուռն բաց մեզ,
Ե՛կ, բարեխնամ այց արա մեզ,
Այցելութեան ժամ է արդ մեզ:

փրկէ զիս յաւիտենական կրակէն, եւ ինծի լսելի ըրէ՝
արդարներուն դէպի երկինքի Արքայութեանդ երանաւետ կոչումը.
եւ ողորմէ՝ Քու արարածներուդ . եւ ինծի՝ բազմամեղիս:

Ամենողորմ Տէ՛ր, ողորմէ՛ բոլոր քեզի հաւատացողներուն,
իմիններուս եւ օտարներուն, ծանօթներուս եւ անծանօթներուն,
ողջերուն եւ մեռելներուն, եւ թողութիւն շնորհէ՛ իմ թշնամիներուս
եւ ատելիներուս, որ ինծի հանդէպ յանցապարտ են, եւ դարձո՛ւր
զանոնք, իմ մասիս՝ իրենց մտադրած չարիքներէն, որպէսզի
արժանի ըլլան քու ողորմութեանդ. եւ ողորմէ՛ Քու
արարածներուդ . եւ ինծի՝ բազմամեղիս:

Փառաւորեա՛լ Տէ՛ր, ընդունէ՛ քու ծառայիդ աղաչանքները, եւ դէպի
բարին կատարէ՛ իմ խնդրուածքներս. բարեխօսութեամբ Սրբուհի
Աստուածածնին, եւ Յովհաննու Սկրտչին, եւ Սրբոյն
Ստեփաննոսի Նախավկային, եւ Սրբոյն Գրիգորի՝ մեր
Լուսաւորչին, եւ Սուրբ Առաքեալներուն, Մարգարէներուն,
Վարդապետներուն, Մարտիրոսներուն, Յայրապետներուն,
Ճգնաւորներուն, Կոյսերուն, Մենակեացներուն, եւ քու երկնային
եւ երկրաւոր բոլոր Սուրբերուդ, եւ քեզ փառք եւ երկրպագութիւն՝
անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ, յաւիտեանս յաւիտենից.
Ամէն:

Ծունկի գալ

ԵՐԳ

Դպ.- Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա,
Տէ՛ր ողորմեա, Տէ՛ր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն,
Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ հիւանդաց բժշկութիւն,
Ննջեցելոց արքայութիւն:
(կամ) Ազգիս հայոց սեր միութիւն,
(եւ կամ, Ազգիս Յայոց այցելութիւն:

Ելի՛ր, ո՛վ մեր հայրերուն Աստուածը,
Որ տառապողներուն ապաւենն ես:
Օգնութեան հասիր քու ծառաներուդ, (եւ)
Օգնական եղիր հայոց ազգին:

Եկո՛ւր, ո՛վ Տեր Յիսուս, ողորմէ՛ մեզի:
Ողորմութեան դուռը բաց:
Եկո՛ւր, ո՛վ բարեխնամ, այցելէ՛ մեզի,
Արդէն իսկ այցելութեան ժամ է՝ մեզի:

ՏԷ՛ր ողորմեա, ՏԷ՛ր ողորմեա,
Յիսուս Փրկիչ, մեզ ողորմեա:

Յիշեա՛ ՏԷր եւ ողորմեա՛:

ՄԱՂԹԱՆՔ

ՔՅԼՅ. Եւ վասն Սրբուհոյ Աստուածածնին բարեխօսութեանս, ՏԷր, ընկալ գաղաչանս մեր եւ կեցո զմեզ:

Ք Ա Ր Ո Չ

ՄՐԿ. Սուրբ գԱստուածածինս եւ գամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի եւ գթացեալ կեցուցէ զարարածս իւր:
Ամենակալ ՏԷր Աստուած մեր. կեցո՛ եւ ողորմեա՛:

ԱՂՈԹՔ

ՔՅԼՅ. Ընկալ՛, ՏԷ՛ր, գաղաչանս մեր բարեխօսութեամբ Սրբուհոյ Աստուածածնին անարատ ծնողի Միածնի Որդւոյ քո եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց: Լուր մեզ, ՏԷ՛ր, եւ ողորմեա՛, ներեա՛, քաւեա՛ եւ թո՛ղ զմեղս մեր: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամեն:

Օրհնեալ տեր մեր Յիսուս Զրիստոս. ամեն:

Հայր մեր, որ յերկինս ես, սո՛ւրբ եղիցի անուն Զո: Եկեսցէ՛ արքայութիւն Զո: Եղիցին կամք Զո որպէս յերկինս՝ եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր: Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ: Չի Զո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամեն:

ՔՅԼՅ. Չհանդստեան գաղօթս եւ գաղաչանս ընկալ, մարդասեր Ասրուած, ի հաճոյս բարերար կամաց քոց. եւ մեր մեղաց եւ բազում յանցանացն թողութիւն շնորհեա. եւ քեզ փառք յաւիտեանս. ամեն:

ՏԷ՛ր ողորմեա, ՏԷ՛ր ողորմեա,
Յիսուս Փրկիչ, մեզ ողորմեա:

Յիշեա՛ Տէր եւ ողորմեա՛:

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ

ԲՅՆՅ. Սրբուհի Աստուածածնին բարեխօսութեանց սիրոյն, ՏԷ՛ր, ընդունե՛ մեր աղաչանքները:

Բ Ա Ր Ո Չ

ՍՐԿ. Սուրբ Աստուածածինն ու բոլոր Սուրբերը, բարեխօս ընենք երկնաւոր Զօր առջեւ. որպէսզի կամենալով ողորմի, եւ գթալով՝ ապրեցնէ իր արարածները:

Ամենակ՛ալ Տէր Աստուած մեր ողորմե՛ եւ ապրեցո՛ւր:

Ա Ղ Օ Թ Բ

ԲՅՆՅ. Ընդունե՛, ՏԷ՛ր, մեր աղաչանքները, Սրբուհի Աստուածածնին՝ Միածին Որդւոյդ՝ անարատ ծնողին բարեխօսութեամբ, եւ Զու բոլոր Սուրբերուդ աղօթքներով: Լսե՛ մեզի, ՏԷ՛ր, ողորմե՛, ներե՛, քաւե՛, եւ թողութիւն տո՛ւր մեր մեղքերուն. արժանի ըրե՛ գոհութեամբ փառաւորելու գթեզ, Որդւոյդ եւ Սուրբ Զոգւոյդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ տեր մեր Յիսուս Զրիստոս. ամէն:

Հայր մեր՝ որ երկինքն ես. սուրբ թող ըլլայ Զու Անունդ: Զու թագաւորութիւնդ թող գայ. Զու կամքդ թող ըլլայ. ինչպէս երկնքի մէջ նոյնպէս երկրի վրայ: Մեր հանապազօրեայ հացը. տուր մեզի այսօր: Եւ ներե՛ մեզի մեր պարտքերը. ինչպէս եւ մենք կը ներենք մեր պարտապաններուն: Եւ մի թողուր որ փորձութեան մէջ իյնանք, այլ փրկե՛ մեզի չարէն: Զանգի Զուկդ են Թագաւորութիւնը եւ Չօրութիւնը եւ Փառքը յաւիտեանս. ամէն:

ԲՅՆՅ. Մարդասեր Աստուած, Զու բարերար կամքովդ ընդունե՛ Հա նգստեան ժամու այս աղօթքը եւ աղաչանքները, եւ մեր մեղքերուն եւ բազում յանցանքներուն թողութիւն շնորհե՛. եւ Զեզ փառք յաւիտեանս. Ամէն:

ՄԱՂԹԱՆՔ
«Փառք քեզ»

ՔՅԼՅ. Փառք քեզ, Տէր Աստուած մեր, որ պարգեւեցեր զօրս զայս բարեալ եւ խաղաղութեամբ անցուցանել:

ԴՊ. Օրհնեալ է Աստուած:

ՔՅԼՅ. Մարդասէր Աստուած, զառաջիկայ գիշերս որ ի վերայ մեր գալոց է, ի մեղաց փրկեա, ի չարեաց ազատեա, եւ ի գործս բարիս առաջնորդեա:

ԴՊ. Ամէն:

ՔՅԼՅ. Առաւօտու օրհնութեանցն եւ փառաբանութեանցն արժանի առա զամենայն հաւատացեալս անուանդ քում սրբոյ, եւ պահեա ի խաղաղութեան:

ԴՊ. Ամէն:

ՔՅԼՅ. Տէր Աստուած մեր, տուր զքո խաղաղութիւնդ ամենայն աշխարհի, բա՛րձ զցասումն եւ զպատուհասն ի յարարածոցս:

ԴՊ. Ամէն:

ՔՅԼՅ. Ողորմեա՛ հարց եւ եղբարց մերոց կենդանեաց եւ հանգուցելոց:

ԴՊ. Ամէն:

ՔՅԼՅ. Ողորմեա զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, պտղատուից, սպասաւորաց, եւ այնոցիկ՝ որք ընդ հովանեալ սրբոյ եկեղեցւոյ են հանգուցեալ:

ԴՊ. Ամէն:

ՔՅԼՅ. Տէր Աստուած, օգնեա՛ թագաւորացն քրիստոնէից, եւ իշխանացն բարեպաշտից, զօրաց եւ զաւակաց ւոցին՝ պահելով ի խաղաղութեան:

ԴՊ. Ամէն:

ՔՅԼՅ. Տէր Աստուած մեր, պահեա զառաջնորդս եւ զեղբայրութիւնս մեր ամբողջ եւ անխռով ի կամս ողորմութեան քոյ:

Մ Ա Ղ Թ Ա Ն Բ

«Փառք Բեզ»

ԶՅՆՅ. Փա՛ռք Բեզ, ՏԵ՛ր Աստուած մեր, որ այս օրը բարիով եւ խաղաղութեամբ անցնել պարգեւեցիր:

ԴՊ. Օրհնեա՛լ է Աստուած:

ԶՅՆՅ. Մարդասե՛ր Աստուած, յառաջիկայ գիշերը որ մեր վրայ կուգայ, մեղքերէն փրկե՛, փորձանքներէն ազատե՛, եւ բարութիւններ ընելու առաջնորդե՛:

ԴՊ. Ամէն:

ԶՅՆՅ. Առաւօտեան օրհնութիւններուն եւ փառաբանութիւններուն արժանի ըրե՛ բոլոր քու Սուրբ Անունիդ հաւատացողները, եւ խաղաղութեան մէջ պահե՛:

ԴՊ. Ամէն:

ԶՅՆՅ. ՏԵ՛ր Աստուած մեր, խաղաղութիւնդ տո՛ւր ամբողջ աշխարհի, վերցո՛ւր բարկութիւնն ու պատուհասը արարածներու վրայէն:

ԴՊ. Ամէն:

ԶՅՆՅ. Ողորմե՛ ՏԵ՛ր, մեր հայրերուն եւ եղբայրներուն, ողջերուն եւ հանգուցեալներուն:

ԴՊ. Ամէն:

ԶՅՆՅ. Ողորմե՛ Եկեղեցի շինողներուն, բարերարներուն, պտղատուններուն, սպասաւորներուն եւ անոնց՝ որոնք Սուրբ Եկեղեցոյ հովանիին ներքեւ կը հանգչին:

ԴՊ. Ամէն:

ԶՅՆՅ. ՏԵ՛ր Աստուած մեր, օգնե՛ քրիստոնեայ թագաւորներուն, բարեպաշտ իշխաններուն, զօրքերուն եւ անոնց զաւակներուն խաղաղութեան մէջ պահելով :

ԴՊ. Ամէն:

ԶՅՆՅ. ՏԵ՛ր Աստուած մեր, քու ողորմութեանդ կամքով, ամբողջ եւ անխռով պահե՛ մեր առաջնորդն ու եղբայրութիւնը:

ԴՊ. Ամէն:

ՔՅՆՅ. Նշանաւ սուրբ եւ պատուական խաչիւ քոյ՝ հալածեա զերեւելի եւ զաներեւոյթ թշնամին ի սահմանաց մերոց եւ ի բնակութենէս մերմէ:

ԴՊ. Ամէն:

ՔՅՆՅ. Փրկեա զմեզ ի հրոյն յաւիտենից, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն:

ԴՊ. Ամէն:

ՔՅՆՅ. Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սրբոյ Զոգւոյն, երթայք, հանգերուք խաղաղութեամբ, եւ Տէր Յիսուս եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ.

Ամէն:

ԴՊ. Ամեն:

ՔՅՆՅ. Քու Սուրբ եւ պատուական Խաչիդ նշանով, հալածե՛ մեր սահմաններէն եւ բնակարաններէն՝ երեւելի եւ աներեւոյթ թշնամիս:

ԴՊ. Ամեն:

ՔՅՆՅ. Փրկե՛ զմեզ յաւիտենական կրակէն, եւ քեզ փա՛ռք յաւիտեանս. ամեն:

ԴՊ. Ամեն:

ՔՅՆՅ. Օրհնեա՛լ ըլլա՛ք Սուրբ Զոգւոյն շնորհներովը, խաղաղութեամբ գացե՛ք եւ հանգչեցե՛ք. եւ թող Տէրը ձեզի եւ ձեր ամենուդ հետ ըլլայ.

Ամեն: